№ 1 (189) XVIII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԻ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

## ՄԻԶԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՆ

(27-29 դեկտեմբեր 1907)

Ահա համերաշխ գործակցութեան մի կարևոր քայլ, „Դիմադիր և գործօն տարրերի կօնգրէսի" կերպարանքով, որ երեկ համարւում էր ցնորք, անմարմին տենչանք, որ այսօր իսկ՝ յոռետեսների աչքում՝ ներկայանում է իբրև մի անցողակի, խարխուլ ձեռնարկ, բայց որը շօշափելի փաստ է, մարմնացած, կանգուն հրապարակի վրայ, ընդունակ բանալու մի նոր տարեշրջան Օսմանեան բռնապետութեան տապալման գործում...

Ատելութեան, քէնի ու թշնամանքի կուռքերը, որոնց երկրպագում էին ոչ միայն սուլթաններն, սադրազաններն ու վալիները, այլ նոյնիսկ ստրկացած ժողովուրդները,— որոնց ոսկորներից և կազմւածեն այդ կուռքերի պատանդանները,—երերման մէջ են նրանք գլորւում, կործանւում են, և նրանց դիմաց, յեղափոխութեան կարմիր հորիզօնի վրայ, մշուշապատ խորքերից՝ գլուխ է բարձրացնում բողոքող, կռւող, յեղափոխող տարրերի համերաշխութեան կուռքը, մարտական գործակցութեան գրաւիչ արևը, այնքա՜ն վտանգաւոր խաւար ոյժերի համար, այնքա՜ն ատելի բոլոր թագակիրների և նրանց շրջապատի համար։

Այդ կենսատու համերաշխութիւնը առանձնասեռնեակներում չը ձեռակերտւեց և ոչ էլ արդիւնք է անհատների անձնական կամեցողութեան։ Ոչ։ Ամենից առաջ և ամենից շատ նա արձագանք է այն մարտական եղբայրակցութեան, որ սկիզբն է առել արեան և տանջանքի Երկրում, այն խորիմաստ մերձեցման, որ ինքը սուլթանական ըէժիմը իր ծայրայեղ սարսափներով, և հակառակ իր կամեցողութեան, ներշնչեց կրօնապէս և ազգայնապէս բաժանւած, բայց վշտով, ցաւերով ու դժբախտութեամբ շաղկապւած ժողովուրդներին։

Այդ վիշտն ու դժբախտութիւնը, այդ համապետական տառապանքն ու նախատինքը երկա՜ր, շատ երկա՜ր տևեց։ Ազգեր ազատեցին, ստրկութեան գրկից ժողովուրդներ ոտքի ելան, բռնապետներ գլորեցին և միայն սուլթանական կենդրօնի ու Փոքր-Ասիական բարձրավանդակի վրայ անասան մնաց այն ըէժիմը, որ նախատինքն է իր ցեղի, ամօթանքը պետութեան, զզւանքը մարդկային տարեգրութեան։ Ըէժիմ, որ անսահման ստորացման և մահաբեր քայքայման հասցրեց մի երկիր, որ կոչւած է, թէ՛ իր դիրքով, թէ՛ իր պարունակած ազգերի կուլտուրական հակումներով, քաղաքակրթական նախամարտիկը լինելու մերձաւոր արևելքի մէջ, բայց որը, աւա՜ղ, դեռ այսօր ևս ստրկութեան, աղքատութեան ու տանջանքի համաշխարհային թատերաբեմն է ներկայացնում, խտացումը այն բոլոր արհաւիրքների, որոնց թեթևագոյնը համաժողովրդական լացն է ու ողբը...

Քաղաքական ապիկարութեան և ազատագրական անգոնացման եզակի պատկեր պիտի ներկայացնէին Թիւրքիայի բոլոր ազգերը, շարունակելով տանջւիլ միասին, և կռւել առանձին-առանձին, շարունակելով հաշտ մնալ տանջւելիս, և անհաշտ կռւելիս։ Երկարամեայ տանջանքն և անորոկելի զոհերը, տրւած Եըլդըզին և բռնապետութեան, տրւած բոլոր ազգերի մանաւանդ նրանց կողմից, որոնք բողոքի և ըմբոստացման նախամարտիկները եղան, բացարին աչքերը, թօթափեցին անգիտակցութեան փոշին, կամուրջներ գցեցին երեկեան թշնամի տարրերի միջև, և հասկացրին նրանց այն տարրական ճշմարտութիւնը, որ միատեղ տանջողները պէտք է միատեղ կռւեն, հասկացրին, որ ստոր դաւաճանութիւն է մի եղբօր համար՝ համբուրել այն եաթաղանը, որով միւս եղբայրն է յօշոտւած, պագնել այն արիւնոտ ձեռքը, որը հազարաւոր հարևանի արիւնով է ներկւած...

Ու այդ հրամայական ճշմարտութեան առջև պէտք է գլուխ խոնարհեցնեն կրօնական ատելութիւնները՝ բորբոքւած սև ոյժերի շնչով, ազգայնական թշնամութիւնները՝ գրգռւած անարգ ըէժիմի վարպետների

ձեռքով, կուսակցական ինքնասիրութիւնները՝ արդիւնք սին հակումների, ճանապարհ տալու այն գործելակերպին, որը այս էջերի մէջ շատ անգամ ամենաբուռն պաշտպանութիւն է գտել, և որը ամենադրականն է, խելացին և նպատակայարմարը։

Փաստը կատարուած է։

Համերաշխութեան և համագործակցութեան կօնգրէսն, որը—կասկած չունինք—կը շարունակէ գրաւել նոր ոյժեր և նոր խմբեր, կը հողմահարէ երկիրը նոր հովերով, նոր խօսքերով, ցայժմ ծանօթ մի քանի շրջանների միայն, նոր ծրագիրներով, դեռ ևս անյայտ պետութեան շատ մասերին։

Մենք ջատագովում ենք համերաշխութեան գաղափարը առած վերապահութեան։ Միջազգայնականութեան զինւոր ենք մենք, և համերաշխութեան անվերապահ կողմնակից։ Ոչ մի տարակուսանք, ոչ մի տատանում։

Այո, նոր և դժուարին գործելակերպի ընթացքում, կարող են պատահել, այո, թոյլեր, տատանուողներ, նոյնիսկ դասալիքներ. սակայն դա երբէք չի կարող նսեմացնել գաղափարի ոյժը, չի կարող հերքել սկզբունքի մեծութիւնը։—Թոյլերին կը յաջորդեն աւելի ուժեղները, անընդունակ զինւորների տեղը կը բռնեն անձնուէր մարտիկներ, տատանուող խմբակցութիւնները—ինչ ազգից էլ լինին—կը փոխարինուին խորապէս համոզուած և նուիրուած կազմերով, որովհետև այն մթնոլորտը, որը ստեղծուում է համերաշխութեան մէջ և նրա շուրջը, ընդունակ է ոչ թէ սպանելու է և քայքայելու, այլ առաջ քաշելու և ստեղծելու նոր ոյժեր, նոր խմբակցութիւնները, մէկը աւելի զօրեղ քան միւսը, յաջորդը աւելի կենսունակ քան նախորդները։

Եւ ամրապնդուած այս համոզմունքով ու զօրեղ վաղւան յաղթանակի հաւատով, մենք, անկեղծ աջակցութեամբ բոլոր կուսակցութիւնների, կը շաղկապենք ցայժմ թշնամի ու հակադիր ոյժերը և գրոհ կը տանք դէպի թշնամին, գլորելու—ինչպէս ասաց մէկը թիւրք կօնգրեսիստից—Օսմանեան Բաստիլը՝ Եըլդըզ-Քեօսքը,—արտասուքի, վշտի և տանջանքի այդ նախատական կոթողը։

# ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

## ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐՈՒ ԿՕՆԳՐԷԻՆ, ԳՈՒՄԱՐԻԱԾ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ.

Թիւրքիոյ մէջ գործող ընդդիմադիր կուսակցութեանց կօնգրէսն, գումարուած 1907 դեկտ. 27—29-ին, կը յայտարարէ ձեռք բերել համերաշխութիւնը Օսմ. կայսրութեան բոլոր ժողովուրդներուն, որոնք միահամուռ կը տառապին երկրին վրայ ծանրացած և սուլթան Ապտիւլ-Համիտ Բ.-ի հրէշային ոճիրներով ամբողջ աշխարհի աչքերուն պժգալի դարձած բռնապետական ռէժիմէն։

Երեսնամեայ այս թագաւորութիւնը աղէտալի եղած է ոչ միայն, ինչպէս յանիրաւի կը կարծուի, քրիստոնեայ ժողովուրդներուն, զորս սուլթանը կը հալածէր և կը ջարդէր իր սեփական շահուն համար, այլ նաև իսլամներուն ևս՝ քանդուած, ստրկացուած, տարագրուած, մորթոտուած, վերջապէս անարդարօրէն ամբաստանուած քաղաքակիրթ ժողովուրդներու կարծիքին առջև, որ զանոնք պատասխանատու կարծած է սուլթանին և զայն շրջապատող չարագործներուն կողմէ մարդկութեան դէմ գործուած ոճիրներուն համար։

Կայսրութեան բոլոր ազգերը, յաջորդաբար, զոհ եղան Ապտիւլ-Համիտի եղեռնագործ կատաղութեան. անիկա յաջորդաբար մղեց զանոնք մէկը միւսի դէմ, գրգռելով և արծարծելով արհեստական ատելութիւն՝ ցեղերուն և կրօններուն միջև—Թիւրք, Հայ, Յոյն, Պուլկար, Վլաղ, Ալպանացի, Արաբ, Հրէայ, Տրուզ և Քիւրդ տեսան հալածանք, աքսոր, տարագրութիւն և ջարդ. իսկ հայկական կոտորածները, իբրև պսակ բոլոր անցեալ եղեռնագործութիւններուն, արժանացուցին իրենց հեղինակը—որ տակաւին իր ոճրագործութիւնը կը շարունակէ Արաբիոյ մէջ—Մեծ Մարգասպան և Կարմիր Սուլթան անուններուն։

Բացի այս ոճիրներէն, Ապտիւլ-Համիտ հետապնդած է յամր բանդումի քաղաքականութիւն մը՝ որ կոչնչացնէ հետզհետէ Թիւրքիոյ բոլոր կենդանի ուժերը։ Իրմով անդամալուծուեցաւ մտաւորական, տնտեսական ու ընկերական ամէն կեանք։

Անիկայ սարսափ կը զգայ կրթութենէ և կուլտուրայէ, որ ինքնագիտակցութիւնն ու ազատ մտածողութիւնը կը կազմեն. ուստի, կրցածին չափ կաշկանդեց հանրային կրթութիւնը և գիտութեան ծարաւ ժողովուրդներէն խլեց ինքնակրթութեան միջոցները։ Փակեց վարժարանները, բանտարկեց ուսուցիչները, աքսորեց ուսանողները. իսկ կրթական այն շէնքերուն մէջ որ դեռ չէ ոչնչացուցած՝ նեազեցուց ուսուցումը, աննախընթաց ծայրայեղ գրաքննութեան մը միջոցով։

Մամուլն ևս ամբողջովին ստրուկ է. անոր թող տրուած է միմիայն հրատարակել գրաքննիչներու կողմէ թոյլատրուած կամ յերիւրուած լուրերը. և այսպէս,

թիւրք կայսրութիւնը, իր տիրող կամքով, շրջապատուած է տգիտութեան և ստութեան պարիսպով մը։

Ապտիւլ-Համիտ ոչ միայն հակառակորդ է մտաւոր զարգացման,—ինչ որ ամենաթանկագի՛ն է ամենուն համար, այլև արգելք եղած է նոյնիսկ ստրկութեան մէջ խրած այս ժողովուրդներու նիւթական բարօրութեանը։ Այս ասպարէզին մէջ ալ դարձեալ աւեր, թշուառութիւն և սով։ Այն անարդար տուրքերը, որ կը հաւաքին նահանգներու մէջ անպարկեշտ և գիշատիչ պաշտօնեաներէ՝ չեն ծառայեր բնաւ ճամբաներու և ջրանցքներու շինութեան, այլ լեցնելու՝ պալատին սընտուկները և պարարելու Եըլդըզի քլիքը՝ ի վնաս աշխատաւորներու, վաճառելու՝ լրտեսներու ամսականները և արտասահմանի մէջ ալ կաշառելու՝ ստորաքարշ թերթերը, որ կը խաբեն Եւրոպան Թիւրքիոյ իրական վիճակի մասին և ներբողներ կը կարդան Ապտիւլ-Համիտի,—ամենամեծ թշնամի՛ն իր երկրին։

Երթևեկի արգելումը և անցագրերու սիստեմատիք զլացումը անկարելի կը դարձնեն առևտրական ուէ գործունէութիւն։ Հարկերու ծանրութիւնը, գիւղերու անապահովութիւնը, արմտիքի մենագրաւումը (մատրաղութիւն), վաշխառութիւնը, հաղորդակցական միջոցներու պակասը փճացուցին հողագործութիւնը։ Բնութենէն օժտուած ամենահարուստ գաւառները, որոնք երբեմն աշխարհի շտեմարաններն էին, այսօր ամայացած են։ Հանքային ու անտառային հարստութիւնները չեն շահագործուիր և կայսրութեան վրայ խոյացող աշխարհաքաղաքացի դրամատէրերու շնորհուած արտօնութիւնները ոչ մէկ օգուտ չեն տար հանրային բարեկեցութեան, այլ կը ծառայեն միայն կարգ մը յափշտակիչներու մասնաւոր շահերուն։

Իբրև արդիւնք այս բոլորին, ամէն ցեղի և կրօնի բնակիչներ՝ կայսրութեան բոլոր մասերէն՝ հազարներով կը ձգեն իրենց ծննդավայրերը և կը գաղթեն այլուր՝ Եւրոպա կամ Ամերիկա, քիչ մը ազատութիւն, ապահովութիւն և ապրուստի միջոցներ փնտռելու։ Արտագաղթը և սովը կը շարունակեն կոտորածի գործը և նոյնքան ապահով կերպով կամայացնեն երկիրը։

Արտաքին քաղաքականութեան տեսակէտով ալ Թիւրքիոյ անձկութիւնը նուազ ողբալի չէ։ Ապտիւլ-Համիտ, իր անձնական դիւանագիտութեամբը, բոլորովին վարկաբեկեց օսմանեան կայսրութիւնը։ Կորսնցուց ազատական պետութիւններուն համակրութիւնը՝ որոնք, Փարիզի և Պերլինի դաշնագրութիւններու ժամանակ, արգիլեցին կայսրութեան ամբողջական անդամատութիւնը, փոխարէն բարենորոգումներու, որ եթէ ժամանակին գործադրուէին՝ ապահոված պիտի ըլլային երկրի վերածնութիւնը և բարգաւաճումը։ Ընդհակառակը, հանդիսաւորապէս և շատ անգամ խոստացած բարենորոգումներու անգործադրութեամբ, սուլթան Համիտ առաջ բերաւ իր յուսախաբ հպատակներուն մէջ ըմբոստութեան արդարացի շարժումներ և եւրոպական պետութեանց կողմէ բազմաթիւ միջամտութիւններ, արդի՛նք իր շարունակական նենգամտութեան։ Այս կործանարար քաղաքականութիւնը յանգեցաւ կայսրութեան հողային նուազման, և եթէ այսպէս ժամանակ մը ալ շարունակուի, ուրիշ մասեր ևս՝ Ալպանիան, Մակեդոնիան, Արաբիան, Հայաստանը, կարճ միջոցի մէջ անվրէպ պիտի բաժնուին կայսրութենէն—արդէն իսկ կատարեալ քայքայման վիճակի մէջ—յօգուտ պետութեանց՝ որոնք կը փնտռեն կամ հողային ընդարձակում, կամ գաղթականութեան վայրեր, կամ ֆինանսական առաւելութիւններ։

Մինչև այժմ իրաց այս վիճակէն առաջ եկած յեղափոխական շարժումները անջատ էին. այսօր շատ մը տեղեր միւսիւլմաններու և քրիստոնեաներու համագործակցութիւնը ցոյց տուաւ, որ կայսրութեան բոլոր ժողովուրդները վերջապէս յոգնած են տառապելէ և կ'ըմբռնեն որ երկրին պետը զիրենք անդունդը կառաջնորդէ։ Այսօր, ամէն ոք՝ որ ընդունակ է մտածելու, պարզ կը հասկնայ, թէ Թիւրք կառավարութեան մէջ անմիջական փոփոխութիւն մը միայն կրնայ արգիլել կայսրութեան վերջնական մեծագէտը և քայքայումը. պէտք է ուրեմն անյապաղ ու բոլոր հնարաւոր միջոցներով տապալել ըէժիմ մը՝ որ այնքան աղէտներու պատճառ եղաւ։

Հետևաբար կը պահանջենք.

1) Գահընկէցութիւն Սուլթան-Համիտի։

2) Արմատական փոփոխութիւն ներկայ ըէժիմին։

3) Հաստատում ներկայացուցչական ըէժիմի (Խորհրդարան)։

Ներկայ բոլոր դժբախտութեանց գլխաւոր հեղինակին անհետացումը առաջին պայմանն է ամէն բարեփոխութեան։ Անոր հետ պէտք է անհետանայ նմանապէս վարչական և քաղաքական բռնակալութեան, ոստիկանական սարսափի և դիւանագիտական նենգամտութեան սիստէմը. ապա պէտք է հաստատուի ներկայացուցչական ըէժիմ՝ որով կայսրութեան բոլոր ժողովուրդները, հաւասար պարտականութիւններով և իրաւունքներով, պիտի արտայայտեն իրենց կարիքներն ու կամքը, և որ պիտի ապահովէ ամէնքին, խաղաղ ներդաշնակութեամբ, արդարութիւնը և ազատութիւնը։

Ահա ներկայ կոնգրէի միաբան նպատակը, համապատասխան՝ Երկրի բոլոր ժողովուրդներու կամքին, որոնք—զաւակները միևնոյն հողին, զոր կը մշակեն և կը տառապին միևնոյն տառապանքը—վճռած են ձեռք բերել, համերաշխ գործակցութեամբ մը, ազատութեան և երջանկութեան իրենց բաժինը։

Մենք կը միանանք ընդհանուր պայքարի մը համար, յարգելով միանգամայն իւրաքանչիւր կազմակերպութեան ինքնավարութիւնը. կը միանանք անկեղծօրէն, եղբայրօրէն, և նախքան կռիւը սկսելը՝ խոստում կուտանք չի թուլնալ ու կը յայտարարենք սուլթանին՝ թէ մեր զէնքերը վար չենք դներ, մինչև որ Թիւրքիոյ համար նոր դարագլուխ մը չի բանանք։

Կոչ կընենք ամենուն՝ աջակցիլ մեզի մեր դաժան և փառայեղ ձեռնարկին մէջ, որ կը պահանջէ անվհատ կորով և ծանր զոհաբերութիւններ։ Կոչ կընենք բոլորին,—գիտութեան և մտքի մարդոց՝ որոնց արգիլած է ուէ անկախ հետազօտութիւն. գիւղացի և քաղաքացի աշխատաւորներուն՝ զրկուած հողէ և հացէ, ենթակա՛յ ապօրինի տուրքերու և խոշտանգուած ու կողոպտուած հարկահաւաք պաշտօնեաներէ. վաճառականներուն՝ որոնք չեն կրնար ազատ ու ապահով կերպով իրենց առևտուրովը զբաղիլ. զինուորներուն՝ որ անվը-

ճար, մերկ ու անօթի են և զրոս սուլթանը կը ստիպէ իրենց հայրենակիցներուն դէմ քալել մէկ խօսքով կայսրութեան բոլոր ազգերուն՝ որոնք ջախջախուած են գարշելի ճնշման մը տակ։ Թող ամենքը միանան այս նեւրական պայքարին, թող ներշնչեն ազատութեան, բարեկեցութեան և յեղափոխութեան գաղափարներէն՝ տապալելու համար, տրամադրելի բոլոր միջոցներով, ամօթալի և բռնակալ ըէժիմ մը։ Երեսուն տարուայ փորձառութիւն մը խիստ դառնօրէն ապացուցուց ամէնքին, որ խաղաղ միջոցները անբաւական են ճնշման զարհուրելի իշխանութեան մը դէմ։ Իր հպատակներու բոլոր խնդրանքներուն, բոլոր աղաչանքներուն՝ սուլթանը միշտ պատասխանեց բռնի ուժով, բանտարկութիւնով, աքսորումով և կոտորածով։

Հետեւաբար, կենդրէն միաբան կ'ընդունի թէ ընդդիմադիր բոլոր խումբերը պէտք է, այսուհետև, դիմեն յեղափոխական միջոցներու՝ որոնք քաջալերական արդիւնք տուած են, ինչպէս ցոյց կուտայ յեղափոխական գործունէութիւնը ընդհանրապէս և Թիւրք-Հայ խաւրն խումբերու նորագոյն գործունէութիւնը։ Ասոնցմէ զատ, Ասիական Թիւրքիոյ մէկ քանի քաղաքներուն մէջ յեղափոխական միջոցներու կիրառութիւնը հարկադրիչ է և կարդարանայ նոյնիսկ կառավարութեան բռնութիւններովը։ Արդի ըէժիմը ինքն է, որ իր ոճիրներով մեզ մղեց յեղափոխութեան։

Մենք մեզ պատրաստ կը յայտարարենք ուրեմն կռիւը շարունակելու, ընդունելով և յանձնարարելով հետեւեալ միջոցները.

1) Զինուած դիմադրութիւն կառավարութեան քայլերուն։

2) Անզէն դիմադրութիւն՝ քաղաքական և տնտեսական գործադուլով. գործադուլ պաշտօնեաներու, ոստիկանութեան կայլն։

3) Մերժում հարկերու։

4) Պրոպականդ զօրաբանակին մէջ,—հրաւէր կարդալ զինուորներուն՝ չի քալել ոչ ժողովուրդին, ոչ ալ յեղափոխականներուն դէմ։

5) Ընդհանուր ապստամբութիւն։

6) Մարտական այլ միջոցներ, համաձայն պարագաներու թելադրութեան։

Համիտական ըէժիմը կ'ոչնչանայ մօտալուտ ապագայի մը մէջ, եթէ ամէն անոնք՝ որ կը տառապին, ունենան, ինչպէս մենք, զայն տապալելու հաստատ կամքը։ Խարխուլ պարիսպ մըն է անիկա՝ որ կարելի է ուսի մէկ հարուածով հրել ձգել, որպէսզի փրկազատ կայսրութեան մէջ հեղեղի ազատութեան և արդարութեան սրբազան լոյսը։

Կեցցէ՛ հաւասարութիւնը ցարդ անմիաբան ազգերուն։

Կեցցէ՛ միութիւնը յեղափոխական ուժերուն։

ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՕՄԻՏԷ
Պաշտ. օրգաններ՝ „Շուրայի Իւմմէթ“ և „Մէշվէրէթ“

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Պաշտօնական օրգան „Դրօշակ“

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ-ԱՆՀԱՏ. ՆԱԽԱՋԵՌՆ. ԱՊԱԿԵՆԴՐՈՆԱՑԻԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
Պաշտօնական օրգան „Թէրաքգը“

ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԷԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ
Պաշտօնական օրգան „Լա Վէրա“

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ԽԻԼԱՖԷԹ“ ԼՐԱԳՐԻ
Պրոպագանդի օրգան արաբերէն և Թուրքերէն (Լոնդոն)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ԱՐՄԷՆԻԱ“ ԼՐԱԳՐԻ
Պրոպագանդի օրգան (Մարսիլիա)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՌԱՋՄԻԿԻ“
Յեղափոխական օրգան (Պալքանեան երկիրներ)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՀԱՅՐԵՆԻՔԻ“
Յեղափոխական օրգան (Ամերիկա)

ԿՕՄԻՏԷ „ԱՀՏԻ ՕՍՄԱՆԻ“
(Եգիպտոս)

---

## ՔԱՂԻԱԾՔՆԵՐ ԿՕՆԳՐԷԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

### Մնայուն խառն կոմիտէ

Կոնգրէն որոշեց՝ կազմել գաղտնի Մնայուն խառն կոմիտէ մը բաղկացած այն կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, որոնք կը գործեն կայսրութեան ներսը։ Սոյն կոմիտէն, կուսակցութիւններու միջոցով, պէտք է իրագործէ կոնգրէի որոշումները։ Կոմիտէն պիտի ունենայ ներքին կանոնագիր մը։ Մնայուն կոմիտէի կազմի և գործունէութեան վերաբերմամբ բացարձակ գաղտնիք պիտի պահի։ Անգաղտնապահութեան ոճէ դէպքում, յանցաւորը անձնական ծանր պատասխանատուութեան կենթարկուի։

### Կոչ յեղափոխական համերաշխութեան

Օսմանեան կայսրութեան դիմադիր և գործօն կուսակցութիւններու կոնգրէն, խորապէս ներշնչուած, մարտական համերաշխութեան գաղափարէն և նկատելով՝

1. Այն անհուն և բազմադիմի ջանքերը, որը կընէ սուլթանի կառավարութիւնը՝ բաժնելու և մէկմէկու դէմ մղելու գործօն և դիմադիր խումբերը, բաժանումի այս քաղաքականութեան մէջ տեսնելով լաւագոյն միջոցը փրկելու համար իր սեփական գոյութիւնը.

2. Այն մեծ աղէտները, որ առաջ կուգան ազգերու փոխադարձ թշնամութիւններէն և մանաւանդ յեղափոխական խումբերի կռիւներէն, ինչպէս օրինակ՝ այդ տեղի ունի Մակեդոնիոյ յոյն և պուլկար խումբերու միջև, և այնքանէն որ յաճախ այդ խումբերը, իրենց ոյժը փոխանակ կառավարութեան դէմ մղելու, իրարու դէմ կամ նոյնիսկ խաղաղ ժողովրդին դէմ կը կռուին։

Կոչ կընէ բոլոր գործօն խմբակցութիւններուն, վերջ դնել այդ եղբայրասպան կռիւն ու հակայեղափոխական տակտիքին, և համաձայն համերաշխութեան սկզբունքներուն, կը հրաւիրէ զանոնք իրենց ոյժերը միացնել բռնակալութեան դէմ,—գլխաւոր աղբիւրը չարիքներուն՝ որմէ կը տանջի երկիրը։

### Ցարգանք դատի նախատակներուն

Օսմանեան կայսրութեան գործօն և դիմադիր կուսակցութիւններու կոնգրէն, գումարուած Եւրոպայում, իր վերջի հանդիսաւոր նիստին մէջ, միաձայն որոշեց արտայայտել իր խորին համակրութիւնը՝

1. Քաղաքական բանտարկեալներուն,

2. Աքսորուածներուն և քաղաքական տարագիրներուն, որոնք կռուած են բռնապետական ռէժիմին դէմ։

Կոնգրէի անդամները ոտքի ելան յարգելու համար այն քաջերը, որոնք ինկան կռուի դաշտին վրայ, ժողովրդի ազատութեան անունով և որոնք, իրենց գործով ու օրինակով, պիտի ոգևորեն, նոյն քաջութեամբ, իրենց յաջորդները, ազատութեան և արդարութեան այս ցաւատանջ կռուին մէջ։

### Դաւանանքներուն դէմ

Կոնգրէն, կազմակերպիչ Բիւրոյի առաջարկութեան վրայ, որոշեց՝ խստիւ պատժել, քննելէ և ապացուցանելէ յետոյ, այն մարդիկ, որոնք կը դաւաճանեն և կառավարութեան կը վաճառուին։ Վճիռներու գործադրութիւնը յանձնուած է կազմակերպութիւններուն։

### Յեղափոխական գրականութիւն

Կոնգրէն, երկրին մէջ հակակառավարչական և յեղափոխական փրոփականդին ուժեղ զարկ տալու համար, որոշեց՝ հրատարակել թիւրքերէն, հայերէն, յունարէն, պուլկարերէն, ալպաներէն, արաբերէն և քիւրդերէն լեզուներով շարք մը գրքոյկներ և զանոնք՝ ներքին կազմակերպութիւններու միջոցով՝ տարածել ժողովրդի ամէն խաւերու մէջ։

Մանաւորապէս որոշեց կոչեր ուղղել՝

Գիւղացիներուն,

Զօրաբանակին,

Մտաւորականներուն,

Հոգևորականութեան (այլևայլ),

Պաշտօնեաներուն,

Որպէսզի բոլոր տարրերը, նոյնիսկ անոնք, որոնք ցարդ հեռու մնացած են քաղաքական կեանքի մասնակցութենէն, հասկնան՝ թէ պէտք է միանալ և ապստամբիլ իրենց ընդհանուր թշնամիին—կառավարութեան դէմ։

### Յաջորդ կոնգրէի բնականը

Առաջիկայ կոնգրէն տեղի պիտի ունենայ 1908-ի դեկտեմբեր ամսոյ վերջը։ Ստիպողական պարագային, մնայուն կոմիտէն կընայ փոխադրել անոր գումարումը, մասնակցող կազմակերպութիւններու հաւանութեամբ։

---

## ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ՁԱՅՆ

„Պրօ Արմէնիայի“ խմբագրութեան

*Պարիզ, 9 յունուար, 1908.*

Սիրելի բարեկամ,

Կը շնորհաւորեմ Օսմանեան Կայսրութեան զանազան ազգութիւններու ներկայացուցիչները. կը շնորհաւորեմ Թիւրքիան և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը՝ այն բարեբաստիկ համաձայնութեան համար որ հաստատեցաւ այս մեծ պետութեան ազատագրութեան համար որ զոհն է Աբդիւլ-Համիդի։ Բարոյական և քաղաքական մեծ գործ մըն է սա,—հիմնական միութիւնը խալամներու և քրիստոնեաներու միջև, օսմանցիներ, հայեր, սլաւներ. ինչ որ ապացոյց է աղանդական և ազգամոլ ամէն մտահոգութիւններու բացակայութեան։

Ամէնքին իրաւունքն է այս, ամէնքէն հետապնդուած և ամէնքին համար։ Այս համերաշխ ջանքերու նպատակը, ինչպէս ցոյց կուտայ կոնգրէի յայտարարագիրը, այսինքն Ապդիւլ-Համիդի գահընկեցութիւնը, ներկայ դրութեան արմատական փոփոխումը և ներկայացուցչական ռէժիմի հաստատումը, կը կազմէ պահանջումներու ճիշդուճիշդ, բայց բաւարար նուազագոյնը այս մեծահոգի ժողովուրդներուն, որոնք չեն ուզեր մեռնիլ։ Վերջապէս ուրախ եմ որ վեց կէտերու մէջ ճշդուած է գործունէութեան ձև մը որ կարելի է ձևակերպել այսպէս՝—մեթոդիկ յեղափոխութիւն՝ որ կրաւորական դիմադրութենէն (հարկերու մերժում, բանակին՝ բռնակալութեան ձեռք գործիք չըլլալը), անցնելով ընդհանուր գործադուլէն (քաղաքական և տնտեսական, մէջը ըլլալով պաշտօնեաները և ոստիկանութիւնը), կը դիմէ մինչև ընդհանուր ապստամբութեան և ուրիշ միջոցներու, որ պարագաները կը թելադրեն։ Կռիւ, ցմահ կռիւ, կռիւ բռնակալին. ահա միակ բանը՝ որ մարդկութեան գիտակցութիւնը և դատողութիւնը կըմբռնեն և կընդունին։ Երբ լուրջ մարդիկ, որոնք կռուի մէջ հասունցած են, հրապարակով այսպիսի պարտականութիւններ կը ստանձնեն, մանաւանդ իրենց ազգին և աշխարհի հանդէպ, այլևս ետ չեն դառնար։ Ուստի—ներկայիս, երբ բարոյական այնքան սնանկութիւններու դէմ ունեցած

ատելութիւնս զիս լաւատեսութեան չի նախատարամադրեր — կսպասեմ, վստահութիւնով, Աբդիւլ-Համիդի դէմ ամբողջ Արևելքի այս զօրաշարժի արդիւնքին, առանց խորութեան ցեղերու և կրօններու։

Շերդ

ՖՐԱՆՍԻՍ ԴԷ ՊՈՒՆՍԱՆՍԻ

---

## ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԱԿՏԸ

„ԴՐՕՇԱԿԻ" Խմբագրութեան

Սիրելի ընկերներ,

Զիվլինի սոսկալի կռիւ մէջտեղ երբ հայ Փեդայիները, վամփուշտին ապառած, քարերով գրոհ տուին համիդեան զօրքերուն վրայ և մինչև վերջինը ապաննուեցան, ապաւորութիւնը, բան անգլիական քննութեան, զինուորներուն և թիւրքը ժողովրդին վրայ՝ ահագին էր։ Սպաններու կողմէն, որոնք սուլթանի հրամանները գործադրած էին, ոչ մէկ թշնամութեան հետք դէպի իրենց ահարկու հակառակորդները, „անոնց և շրջակայ թիւրքերուն մէջ անէծք միայն էր լուեր կառավարութեան դէմ որ մղած էր հայերը այսպիսի ծայրայեղութեան"։ Ծերունի թիւրք մը հերոսներու մահը լսելով՝ կրսեր պը. Շիվլիին, „ինչքա՜ն երիտասարդ, ինչքա՜ն քաջ էին և ինչքա՜ն յուսահատօրէն կռուեցան"։

Հէնց այս բոպէին, թիւրք դիւղացիները, նոյնքան տառապող որքան և հայերը՝ որոնց հետ երբեմն խաղաղօրէն կապրէին, ոկսած են հասկնալ որ իրենց միակ և բուն թշնամին Ապդիւլ-Համիդն է և դիշակը շուներու այն վոհմակը, որոնք կապրին ժողովրդին կռնակէն և միասին գործած ոճիրներու աւարէն։ Սակայն ոչ երկրին մէջ, ոչ ալ կամաւոր աքսորականներուն մէջ, որոնք առանձին-առանձին կը գործէին ըէժիմի կործանելու համար, տառապակից եղբայրներու մէջ դեռ բացէբաց արտայայտած չէր համաձայնութեան այնքա՜ն բնական գաղափարը։ Եւ յեղափոխութիւն բառը իսկ անընդունելի կը թուէր Եւրոպա ընակող կարգ մը Երիտասարդ Թիւրքերու, որոնք, անտարակոյս, հրաշքէ մը բան մարդկային ջանքերէ կապասէին կոտորածի և ոսկիներու թաղաւորութեան վախճանը։

Սակայն չորս տարիէ իվեր իրերի կերպարանքը եղակաւորէն փոխուած է։ Էրզրումի, Քասթէմունիի, Տիարպէքիրի և Պիթլիսի մուսուլմանները՝ հետևեցան հայերու տուած օրինակին. հայմերութիւններին հատած, անոնք վռնտեցին սուլթանի պաշտօնեաները և ցոյց տուին որ իրենք ալ ընդունակ են յեղափոխութեան։

Բայց իրենց մարտնչումը ընդունայն պիտի ըլլար եթէ միայն իրենց ոյժին ապաւինէին, և բան իշխան Սապահ-Էդդինի մերամաղձոտ բացատրութեան „դերեզմաններ էին որ կը բաժնէին հայերը թիւրքերէն, որոնք, դարշելիօրէն խաբուած, կայսերական կամքին գործադրիչները եղած էին հայերու դէմ"։

1907-ի Ընդհանուր ժողովին մէջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը, հզօր և մեծահոգի, հնարաւոր ընծայեց համաձայնութիւնը, որ կատարուեցաւ Օսմանեան կայսրութեան դիմադիր կուսակցութիւններու վերջի կոնդրեին մէջ։ Մօտաւոր ժամանակի մը մէջ, Զիվլինի սուլթանական սպաները և ծերունի թիւրքերը այլևս պիտի չսղլան հայ հերոսներու մահը, այլ պիտի գործակցին անոնց՝ տապալելու համար համանատելի ըէժիմը։

Երկրի ժողովուրդն է որ ներշնչեց դիմադիր խումբերուն այդպիսի որոշում մը կայացնել։ Եւ պէտք է խոստովանիլ որ Դաշնակցութիւնն ալ տարիներէ իվեր, անհամար զոհողութիւններու դնով, ցոյց տուաւ առաւելութիւնը այն գործելակերպի, որ վերջապէս ընդունուեցաւ։ Եւ յեղափոխական ծրագիրը, մեթոդիկ և, բան պարզային, խաղաղասէր և բուռն, գործած է ծրագիրը անոնց, որոնք կը հաւատային, թէ խօսքով կարելի էր տապալել Ապդիւլ-Համիդ և բռնապետական ըէժիմը։

Ակէ յետոյ, Թիւրքերը, Հայերը, Արաբացիները, Պուլկարները, Յոյները, Հրէաները, Արաբները և Քիւրդերը այլևս պիտի չբաւականանան ունայն անէծքներով, այլ բոլորն ալ դիտակցութիւնը ունին՝ թէ կը դիմեն միևնոյն ծայրնպատակին։ Եւ հայ յեղափոխականներն էին որ իրենց հերոսական կռիւներով, սրվեցուցին փրկութեան միակ ուղին ուր, այժմ, ամէնքն ալ վճռականօրէն առաջ կը խաղան։

Յարգանք յեղափոխականներուն, որոնք այդ գերագոյն կռիւին մէջ, իրենց հետ ունին, Եւրոպայի և ամբողջ աշխարհի իրենց բարեկամներուն Ջերմեռանդ և ակընդէմ հաւանութիւնը։

ՊԻԷՐ ՔԻՅԱՐ

---

# ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հինգերորդ Նամակ

Վերադառնում եմ հողային ըէֆօրմի հարցին։ Անցեալ նամակում, եթէ յիշում էք, մենք եկանք այն եզրակացութեան, որ հողային հարցը կարող է լուծուել բանաւոր և արդար ձևով միայն մէկ ուղղութեամբ, այն է՝ հողերի համայնացումով։

Հասկանալի է, որ խնդրի այդպիսի զուտ թէօրիական լուծումը անբաւարար է։ Անհրաժեշտ է ցոյց տալ, թէ ինչ կոնկրետ, շօշափելի ձևեր պիտի առնէ „հողերի համայնացումը"։ Ահա հէնց այդ է ներկայ նամակի նիւթը։

*

Ընթերցողը երևի դիտէ, որ երկրորդ Պետական Դումայի մէջ մտցուած է „Նոր հողային օրէնքի նախագիծը", 104 պատգամաւորների ստորագրութեամբ։ Այս 104 պատգամաւորների թիւումն էին և Դումայի „դաշնակցական" անդամները։ Ուրեմն հողային այն օրինագիծը, որ մտցուած է երկրորդ Պետական Դուման՝ հանդիսանում է, այսպէս ասած, իբրև ագրարային credo (հաւատամք) նաև մեր կուսակցութեան։ Ուստի տեսնենք, թէ ինչ է ասում այդ օրինագիծը։

Ահա թէ ինչ են ցայտնարարում նրա առաջին, հիմնական յօդուածները.

1) Հողային ամէն սեփականութիւն ռուս կայսրութեան սահմաններում՝ այժմից վերացուում է։

2) Հողը ամբողջապէս իր ջրերով ու ցամաքներով՝ ցայտարարուում է իբրև պ ա տ կ ա ն ե լ ո ւ թ ի ւ ն ռուս կայսրութեան բովանդակ աղգաբնակութեան։

3) Բոլոր քաղաքացիներն ու քաղաքացուհիները հաւասար իրաւունք ունին՝ վայելելու այդ ընդհանուր դանձը։

4) Բոլոր հողերի, նրանց ջրերի ու ներքին հարստութիւնների բարձրագոյն տնօրինողն է ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն ն ե ր կ այ ա ց ու ց իչ ն ե ր ի խ ո ր հ ու ր դ ը։ Տեղական տնօրինողներն են՝ տ ե ղ ա կ ա ն ինքնավարութեան օրգանները...

Առաջին երեք յօդուածները կարիք չունին մեկնութիւնների։ Քննենք միայն վերջինը։

Տեղական ինքնավարութեան այդ ի՞նչ օրգանների

մասին է խոսքը։ Գործը անտարակույս պիտի դրված լինի հետևեալ կերպով։

Ամբողջ երկիրը բաժանւում է բազմաթիւ համայնքների *), որոնցից իւրաքանչիւրի մէջ մտնում են մէկ կամ մի քանի գիւղեր, նայած տեղին ու բնակիչների թիւին։ Համայնքի ամբողջ չափահաս ազգաբնակութիւնը ընտրում է իր միջից մի առանձին վարչութիւն, որին և իրաւունք է տրւում տնօրինել համայնքի գործերը, ապա ուրեմն և հողային գործերը։ Ուրիշ խոսքով՝ որևէ համայնքի տրված հողերը պէտք է կառավարեն այդ համայնքի ազգաբնակութիւնից ընտրված անձեր։

Յետոյ՝ մի քանի համայնքներ միանալով կը կազմեն մի աւելի մեծ շրջան, դիցուք՝ „համայնքների գաւառական մի միութիւն“։ Այդպիսի մի միութեան բնակիչները կունենան իրենց „գաւառական ինքնավարութիւնը“, դարձեալ ի հարկէ, ընտրված գաւառի ամբողջ ազգաբնակութիւնից։ Այդ ընտրովի վարչութիւնը պիտի հսկէ, որպէս զի բոլոր բնակիչները գաւառական միութեան մէջ օգտւեն հողից արդար ու նպատակայարմար ձևով։

Նոյնպիսի կարգեր կը սահմանւին և աւելի խոշոր, դիցուք „նահանգական“ միութիւնների համար։

Վերջապէս իբրև ընդհանուր վերահսկիչ տեղական ինքնավարութեան այդ բոլոր օրգանների վրայ՝ կանգնած կը լինի „ժողովրդական ներկայացուցիչների խորհուրդը“ (կամ ժողովը), որև կը հանդիսանայ „Գերագոյն տնօրինողը բովանդակ հողի“։ Այդ ժողովը պիտի հետևէ, որ համայնքները և նրանց զանազան միութիւնները չխախտեն այն կանոնները, որոնց համաձայն ժողովուրդը պիտի օգտւի հողից։

Հարկ չը կայ անգամ յիշեցնելու, որ համայնական, գաւառական, զեմստւային կամ նահանգական ինքնավարութեան անդամները, ինչպէս նաև „ժողովրդական ներկայացուցիչների խորհրդի“ անդամները պիտի ընտրւին միշտ ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ձայնատւութեամբ, առանց խտրութեան սեռի, ազգութեան ու կրօնի. միմիայն այդ պայմաններում՝ թէ տեղական և թէ բարձրագոյն ինքնավարութեան անդամներ կը լինին մարդիկ, որոնք ցանկալի կը լինին ազգաբնակութեանը։

Այդպէս, բարձրանալով աստիճան առ աստիճան, ցածից դէպի վեր, մենք կունենանք ինքնավարութիւնների մի ամբողջ շարք, որոնց ամբողջ հոգսը հողային խնդրի մէջ պիտի կայանայ նրանում՝ որ ընդհանուր, միաբան համաձայնութեամբ՝ տնօրինեն լաւագոյն ձևով աշխատաւոր ժողովրդի վիճակը, որ ապրում է „Մայր-Հողի“ բերքերով։ Մնալով շատ թէ քիչ աւտոնոմ (ինքնօրէն) իրենց սահմաններում՝ այդ բոլոր հողային համայնքներն ու „համայնքների միութիւնները“ պարտաւորւած կը լինեն միևնոյն ժամանակ համաձայնեցնել իրենց գործողութիւնները՝ նոր հողային կազմակերպութեան ընդհանուր դիրեկտիվների (ղեկավարող կանոնների) հետ։

*

Այդպէս ուրեմն „նոր հողային օրինագծի“ համաձայն՝ հողը յայտարարւում է իբրև սեփականութիւն բոլոր ժողովրդի, կամ աւելի ճիշտ՝ տրւում է մշակել ցանկացողներին ոչ իբրև սեփականութիւն (մասնաւոր), այլ „ի վայելումն“, նա տրւում է կենտրոնական կամ տեղական ինքնավարութեան օրգանների տրամադրութեան տակ։ Այստեղ բնականաբար մի շարք հարցեր են ծագում, որոնք ահագին կարևորութիւն ունին հասկնալու համար այն կոնկրետ միջոցները, որ ուզում է իրականացնել „նոր հողային օրէնքը“։ Դրանք են՝

1) Ինչո՞ւմն է կայանում ինքնավարութեան օրգանների „տնօրինութիւնը“ հողային գործում։

2) Հողից օգտւելու ի՞նչ ձևեր և ի՞նչ չափեր ի նկատի ունի հողային համայնացման նախագիծը։

3) Ի՞նչպիսի պայմաններով ժողովուրդը կըսկսի օգտւել հողից։

Շահագործել յօգուտ ամբողջ ազգաբնակութեան՝ հողերը իրենց հանքերով, ջրերով ու անտառներով, բարձրացնել գիւղատնտեսութեան արդիւնաւորութիւնը, և վերջապէս հաւասարացնել եթէ հնարաւոր է, աշխատաւոր ժողովրդի հողային վիճակը—ահա այս է ինքնավարութեան օրգանների հիմնական գործը. դրանում է կայանում նրանց տնօրինութիւնը։

Իսկ այդ տեսակ մի նպատակի հետ կապված են և հողից օգտւելու այն ձևերն ու չափերը, որ թելադրում է „նոր հողային օրէնքը“։ Սկսենք ձևերից։

Հողերը համայնալուց յետոյ մարդիկ պիտի օգտւեն հողից երկու եղանակով,—հասարակական և մասնաւոր։

Ի՞նչպէս հասկանալ այդ։ Հասարակական եղանակը կարելի է պարզել հետևեալ օրինակով։ Ամեն մի երկրում կան վայրեր՝ հարուստ ընդարձակ անտառներով, կան ծովեր ու գետեր՝ առատ ձկներով, կան հողեր՝ լի թանկագին գանձերով, ինչպէս նաև՝ քարածուխ, աղ, երկաթի կամ պղնձի հանքեր, արծաթ, ոսկի և այլն։ Բնութեան այդ բոլոր շնորհները ունին, այսպէս ասած, համաժողովրդային նշանակութիւն։ Նրանից պիտի օգտւեն ոչ թէ այս կամ այն նահանգի բնակչութիւնը, ուր այդ գանձերը գտնւում են, այլ ամբողջ երկրի բնակիչները։ Ուստի ամենից աւելի արդար կը լինի, եթէ բոլոր այդ տեսակ հողերը, անտառներն ու ջրերը անցնեն նահանգական ինքնավարութիւնների և „պետութեան“ տնօրինութեան տակ,—պետութիւն ասելով, հասկանում ենք „ներկայացուցչական ժողով“, ընտրված ամբողջ երկրից։ Նահանգական ինքնավարութիւնները և այդ բարձրագոյն „ներկայացուցչական ժողովը“ կը ձեռնարկեն, ուր որ պէտք լինի, ընդարձակ տնտեսութիւնների, յօգուտ ամբողջ բնակչութեան։ Այդ է հողից օգտւելու հասարակական ձևը։ Այժմ անցնենք միւս ձևին, որ կոչւում է մասնաւոր-աշխատաւորական։

Համաձայն այն հողային օրինագծին, որի մասին խոսում եմ այստեղ, „ի մասնաւոր վայելումն“ կարող է հող ձեռք բերել մի առանձին անհատ, ընտանիք կամ մի քանի մարդիկ, որոնք ուզում են մշակել հողը միասին, ընկերակցական հիմունքներով։ Կարող է հող ստանալ, վերջապէս, երկրագործների մի ամբողջ համքար, որոնք առաջ են տանում իրենց տնտեսութիւնը նոյնպէս ընկերակցական հիմունքներով։

*) Այդ համայնքների մէջ մտնում են ոչ միայն գիւղացիներ, այլ եւ բաղաքացիք, ազնուականներ,—մի խոսքով բոլոր նրանք, որոնք ուզում են „սնունդ առնել հողից“։

Ի՞նչ տեսակ նկատումներով պիտի հող տրվի այդ բոլոր աշխատաւորական միաւորներին ու խումբերին։

Չի կարելի ի հարկէ մի ընդհանուր չափ գտնել ամբողջ ազգաբնակութեան համար։ Չի կարելի ասել—երկու սեռի ամեն մի հոգուն այսքան դեսեատին հող դա կը լինի անմիտ ու անարդար մի հաշիւ։ Մեր երկիրը մեծ է, հողը նրա մէջ ամեն տեղ նոյն տեսակի չէ, և ապա ինքը հողային տնտեսութիւնը զանազան տեղերում զանազան ձևի է։ Իսկ տնտեսութեան զանազան ձևերի համար՝ հող ևս հարկաւոր է զանազան քանակով։ Վերջապէս, միևնոյն տեղում մէկը կուզի երկրագործութեամբ պարապել, միւսը պարտիզպանութեամբ, երրորդը այգեգործութեամբ. իսկ դա դարձեալ կ'անդրադառնայ այն հողի քանակութեան վրայ, որ ստանում են շահագործելու համար։ Մի խօսքով, միևնոյն չափի մասին բոլոր պայմանների համար՝ չի կարելի խօսել անգամ։

Դրանից հետևում է, որ հողաբաժինների չափի մասին լինելիք խնդիրը պէտք է վճռուի տեղն ու տեղը, պէտք է վճռեն համայնքների, գաւառակների, զեմստվոների և նահանգների ընտրեալները, ինկատի ունենալով հող ցանկացողների թիւը, հողի շահաւէտութիւնը, տնտեսութեան ձևը և այլն։

Սակայն ահա թէ ինչն է կարևոր։ Երբ համայնքի, գաւառի կամ նահանգի ընտրեալները կսկսեն պարզել իրենց վայրերի ազգաբնակութեանը տրուելիք հողաբաժինների չափերը,—նրանք պարտաւոր են լաւ յիշել և անպատճառ կատարել հետևեալ կանոնը.—իւրաքանչիւր մի աշխատաւոր, եթէ նա դիցուք մէն-մենակ է, պէտք է ունենայ մի այնպիսի հողաբաժին՝ որ նրանից ստացած եկամուտը ծածկէ աշխատաւորի բոլոր անյետաձգելի տարեկան ծախքերը—ծախք՝ առողջ սնունդի ու բնակարանի համար, ծախք՝ տնտեսութիւնը պահպանելու և ամրացնելու համար, ծախքեր՝ որ կապուած են այս կամ այն վճարելիք հասարակական տուրքերի հետ և այլն։ Միևնոյն կանոնը պէտք է խստօրէն յարգուի և այն դէպքում, երբ հարկաւոր կը լինի որոշել հողաբաժինների մեծութիւնը մի ամբողջ աշխատաւորական ընտանիքի համար։ Հողաբաժինից ստացուած եկամուտը երբէք չը պիտի լինի աւելի քիչ, քան գումարը այն տարեկան ծախքերի, որոնցով պիտի պահպանուի ընտանիքի առողջ ու անաղքատ կեանքը։

Այդ է, որ ընդունուած է անուանել մատակարարողական կամ սպառողական չափ։

Ուրեմն, ինքնավարութեան տեղական օրգանները պէտք է սահմանեն իրենց վայրերում այնպիսի հողաբաժիններ, որոնք չը լինին աւելի փոքր, քան սպառողական չափը։ Հողաբաժինները—եթէ հնարաւոր կը լինի—կարող են լինել այդ չափից և աւելի մեծ, բայց աւելի փոքր՝ երբէք։

Բայց ի՞նչ է նշանակում ունենալ հողաբաժին՝ սպառողան չափից աւելի մեծ։—„Մեծ“՝ մինչև ի՞նչ սահման։ Այդ հարցին միայն մէկ պատասխան կարող է լինել—մինչև աշխատաւորական (մշակողական) չափը։

Իսկ ի՞նչ է աշխատաւորական չափը։ Դա հողի այնպիսի քանակութիւն է, որ մարդը կարող է մշակել միայն ինքը, իր ուժերով, առանց վարձու բանւորների օգնութեան։

Հետևապէս, մեր երկրի իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի ստանալ այնքան քանակութեամբ հող, որքան նա ընդունակ է մշակել անձամբ, սեփական ձեռքերով։ Դրանից աւելի, աշխատաւորական չափից աւելի բարձր չափ՝ ոչ ոք թող յոյս չունենայ ստանալ. չեն տայ։ Իսկ եթէ տան էլ, պիտի տան բոլորովին ջոկ պայմաններով, որոնց մասին յետոյ կը խօսենք։ Այժմ մենք ունենք մի հերթական հարց, առանձին կարևորութիւն ունեցող։

*

Հողերի համայնացումը կը կատարուի բոլոր հողերի ստիպողական օտարացումով (այսինքն իրենց տէրերի ձեռքից առնելով)։ Նոյն վիճակին պէտք է ենթարկուեն ուրեմն և բոլոր մասնաւոր հողային սեփականութիւնները։ Այս հանգամանքից պահպանողական դեմագոգները յետադիմական նպատակներով եղրակացնում են, թէ ուրեմն հողերը պէտք է խլուին նաև գիւղացիների ձեռքից։—Ըստ էութեան, այդ տեսակ եղրակացութիւնը, ի հարկէ, կատարեալ անհեթեթութիւն է։ Եւ ահա թէ ինչու։

Գիւղացիների ահագին մեծամասնութիւնը (ամբողջ աշխատաւոր գիւղացիութիւնը) տառապում է սակաւահողութիւնից։ Նրանք հող չունին ոչ թէ աշխատաւորական, այլ նոյնիսկ սպառողական չափով։ Ի՞նչ կարելի է ուրեմն խլել այդտեղ։ Գիւղացիները միայն կը լրացնեն իրենց ունեցած խղճուկ գոյքը՝ գէթ մինչև սպառողական չափը, և ոչ թէ դեռ ուրիշին կը տան։ Ապա ուրեմն իւրաքանչիւր մի աշխատաւոր գիւղացու մնում է վճռել, թէ ո՞րն է լաւագոյնը՝ հուչակուել իբրև „սեփականատէր“ և ապրել կարօտութեան ու պարտքերի մէջ—թէ օգտուել „հանուր ժողովրդի սեփականութեամբ“ և ապրել առանց կարօտութեան ու առանց պարտքի։ Հարցը այդպէս դրուելով՝ պատասխանը ինքնին պարզ է։ Ապահովութիւնը հողերի համայնացման մէջ անհամեմատ աւելի ամուր է, քան այժմեան „սեփականութիւնը“։ Վերջինը յեղյեղուկ բան է. այսօր նա կայ, իսկ վաղը կը տեսնես, դուրս լողաց ու ընկաւ ուրիշի ձեռքը։

Մի բան էլ չը պէտք է մոռանալ։ Երբ որևէ մէկը գիւղացի անունն է կրում, դա դեռ չի նշանակում, թէ նա աշխատաւոր գիւղացի է։ Կան գիւղացիներ—ճիշտ է փոքրաթիւ—որոնք աւել հող ունին, քան թէ կարող են մշակել իրենք, առանց վարձուր աշխատաւորների։ Այդ տեսակ պարոնների հետ, ի հարկէ, երկար սերեմոնեաներ անելու պէտք չի լինի, որովհետև դրանք արդէն աշխատաւոր գիւղացիներ չեն, այլ իսկական „կուլակներ“ (գիւղական հարստահարիչներ, „բռունցքներ“), կամ ձգտում են կուլակ դառնալու։ Ինքը ժողովուրդը շատ լաւ է հասկանում այդ։ Հարկաւոր կը լինի վերցնել հողերը այն բոլոր մարդկանց ձեռքից, որոնք աւելի ունին, քան պէտք է ունենան՝ աշխատաւորական չափով։ Որքան նրանց պէտք է՝ կը թողնեն իրենց, իսկ աւելին կը վերցնեն ու կը տան չունեցողներին։ Մենք դեռ պիտի պատասխանենք մի էական հարցի, որ կապուած է հողերի համայնացման հետ։ Հարց է ծագում՝ ի՞նչ պայմաններով պէտք է մտցրուի հողից հաւասար կերպով օգտուելու կանոնը։ Պէտք կը լինի՞ արդեօք որևէ վճար տալ ստանալիք հողի համար։ Կամ դուցէ՞ հարկաւոր կը լինի որևէ տուրքեր վճարել։

Այդ հարցումների պատասխանը տալիս է դարձեալ նոյն „հողային նոր օրինագիծը“, որի մասին յիշատակել եմ արդէն։ Այստեղ ասւած է. „Հողից մասնաւոր կերպով օգտւելու համար ոչինչ չեն վճարում,—ոչ կապալի, ոչ էլ հողային հարկի ձեւով“։

Սակայն նոն օրինագիծը ասում է քիչ հեռու, որ „վճարման կարող են ենթարկւել միայն ընդունւած չափից աւելորդ մնացած հողերը, կամ թէ չափազանց եկամուտները, որոնք պայմանաւորւում են հողի առանձին յատկութիւններով կամ թէ որոշեալ հողաբաժնի ուրիշ այս կամ այն առաւելութիւնները“։

Սոյն առարկութեան առաջին կէսը ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Զարմանալի ոչինչ չը կայ, որ այն հողերը, որոնք կը տրւին գործարանների, զաւօտների կամ առևտրական ձեռնարկների համար, պէտք է տրւին որոշ վճարով,—մի վճար, որ կ'առնւի ձեռնարկողներից յօգուտ նոյն վայրի ազգաբնակութեան։ Բայց ինչպէ՞ս հասկնալ երկրորդ իմ ձեռքով ընդգծած մասը վերոյիշեալ առարկութեան։ Չէ՞ որ կարելի է կարծել, որ այստեղ „նոյն հողային օրէնքը“ ինչ որ թակարդ է սարքում և որ հողից օգտւելու համար վերջ ի վերջոյ հարկաւոր է լինելու մի բան մէկին վճարել։ Տեսնենք, այդպէ՞ս է արդեօք։

Իւրաքանչիւրը ձեզնից լաւ գիտէ, որ հողերից ստացւած եկամուտները տարբեր են լինում և այդ տարբերութիւնը կախւած է զանազան հանգամանքներից։

Ահաւասիկ երկու հողաբաժին։ Նրանք հաւասար են իրենց մեծութեամբ։ Նրանց մշակութեան համար գործադրւած է հաւասար չափով աշխատանք ու փող (գիցուք, պարարտացման համար)։ Եւ սակայն մէկ հողաբաժինը աւելի է արտադրում քան միւսը, հետևապէս և աւելի եկամուտ է տալիս։ Ինչո՞ւ։ Ի հարկէ, այն պատճառով, որ մէկը նրանցից ի բնէ աւելի պարարտ է, աւելի արգաւանդ, ուստի և աւելի եկամուտաւոր։

Ահա երկու ուրիշ հողաբաժին։ Նրանք դարձեալ հաւասար են մեծութեամբ։ Նրանց մշակութեան համար տրւած է հաւասար քանակով աշխատանք ու փող։ Նրանք ի բնէ ևս հաւասարապէս արգաստաւոր են։ Բայց մէկը նրանցից ընկած է երկաթուղու կայարանի մօտ, այն ինչ միւսը գտնւում է հեռու և խուլ մի տեղում։ Ահա միակ տարբերութիւնը երկուսի միջև։ Դա է պատճառը, որ մէկը յիշեալ հողաբաժիններից աւելի եկամտաւոր է և հետևապէս աւելի արժէքաւոր։ Դուք տեսնում էք, որ այստեղ յիշւած երկու դէպքերումն էլ՝ հողաբաժինների տարբերութիւնը եկամտի կողմից կախւած է ոչ աշխատանքից և ոչ էլ այն մարդու նիւթական ծախքերից, որը տիրում է կամ օգտւում այդ հողաբաժիններից։ Մի դէպքում ինքը բնութիւնն է արդիւնաւոր, եկամտաւոր դարձնում հողը, միւս դէպքում՝ բոլոր նրանք, որոնք անց են կացրել երկաթուղու գծերը, շինել են վագոններ ու լոկոմոտիվներ, կառուցել են երկաթուղային շէնքեր ևայլն։

Իսկ քանի որ այդպէս է, ես թոյլ կը տամ ինձ հարցնել, արդո՞ք կը լինի արդեօք, եթէ հողից ստացւած աւելորդ եկամուտը (դիֆֆերենցեալ ռէնտա) մանէ այնպիսի մարդու գրպանը, որը, ինչպէս ասում են, մատը մատին չի խփել՝ ստեղծելու համար իր հողային եկամտի այդ աւելորդը։ Արդո՞ք է արդեօք, որ մէկ մարդ միայն վայելէ այն՝ ինչ որ ստեղծւած է շնորհիւ բնութեան և շնորհիւ բազմաթիւ մարդկանց աշխատանքի։ Կարծում եմ, ամեն մէկը ձեզնից կ'ասէ. „ոչ, դա արդար չէ“։ Արդ, քանի որ դա անարդար է, ուրեմն պէտք է այնպէս տնօրինել, որ այն եկամուտը, որի ստեղծմանը ինքը մշակողը բնաւ չի նպաստել,—տրւի ինքնավարութեան տեղական օրգանների տրամադրութեան տակ, որոնք և կը գործադրեն նրան յօգուտ տեղական ազգաբնակութեան։

Ահա թէ ինչ տեսակ „վճարման“ մասին է խօսում նոր հողային օրէնքը։ Ոչ մի թակարդ չը կայ այստեղ և լինել չի կարող, որովհետև նախ՝ այդ „վճարումը“ չը պիտի վերաբերւի աշխատաւոր ժողովրդին—գուցէ միայն մի քանի, անհատների՝ յանուն հաւասարեցման—և երկրորդ՝ որովհետև այն բոլոր նիւթական միջոցները, որոնք կը ստացւին այդպիսի յատուկ „հարկատուութեան“ ճանապարհով՝ պիտի գնան լրացնելու աշխատաւոր ժողովրդի կարիքները,—գնելու, դիցուք, գիւղատնտեսական գործիքներ ամենաչքաւոր բնակիչների համար, հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ ևայլն։

Ինձ մնում է ընդամենը մի քանի խօսք ևս ասել „նոր հողային օրէնքի մասին“։ Այն է.

Մենակ հող ունենալով, դեռ հեռու չես երթայ։ Հողային տնտեսութիւն առաջ տանելու համար՝ հարկաւոր են և համապատասխան միջոցներ. բանող անասուններ, գութան, արօր, սայլ, ցանելու սերմ ևայլն ևայլն։ Շատերը, որոնք պիտի բնակութիւն հաստատեն հողի վրայ,—գիւղացի, թէ ոչ գիւղացի—պէտք է այդ բոլորը նորէն ձեռք բերեն։ Եւ այդտեղ է, որ „պետութիւնը“ պէտք է լայն աջակցութիւն ցոյց տայ նրանց—փոխատու դրամարկղներով, արտօնաւորող արժէքներով ևայլն։ Ահա թէ ինչու հողի համայնացման պահանջի հետ միասին՝ մեր կուսակցութեան ծրագիրը պահանջում է նաև պետական ընդարձակ կրեդիտ աշխատաւոր ազգաբնակութեան համար...

„Հողի համայնացումը“ կազմում է մեր նւազագոյն ծրագրի կենտրոնական և միևնոյն ժամանակ բնորոշ կէտը։ Ուստի ես անհրաժեշտ եմ համարում վերադառնալ այդ խնդրին իմ յաջորդ նամակում։ Իսկ առ այժմ —վերջակէտ։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ԽՎՆԵՐ ԳԻՒՂԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿՌԻՒԸ

—

ՄՈՒՇ, Նոյեմբերի 24

Շատոնց է թիւրք կառավարութիւնը նենգ պատրւակ մը կը փնտռէր Գասըմ պէկի վրայ թափելու իր կատաղութիւնը, և այդ ըրաւ յանկարծակի և անակնկալ յարձակումով մը։

Հոկտեմբեր 14 | 27-ին կիրակի օր դեռ հաւը չխօսած, Խվներ գիւղը (Տարօնի մէջ) յանկարծ կը պաշարւի զօրքերէն։ Արևածագին Գասըմ պէկ կը տեսնէ որ ծուղակը ինկած է։ Երեք թնդանօթ, հեծեալ և

հետևակ զօրքեր, արդէն դիրք բռնած էին, քսանի չափ ալ զօրք գիւղը մտած են ծածուկ։ Գասըմ պէկ առանց արիութիւնը կորսնցնելու կը պատրաստուի դիմադրել։ Գեղին մէջ զօրքեր տեսնելով կը ձայնէ՝ „էյ լրբեր, ո՞ւր կուգաք, մեռնի՞ք...“։ Զօրքերը այս որ կը լսեն կծիկը կը դնեն։

Այս տագնապի պահուն շուտով շուրջը կը հաւաքուին զօլամներ և հասարակութիւնը։ Գիւղին հայ գիւղապետը, իշխանները, շէյխերը և մօլլաները խորհրդակցելով պէկին հետ կորոշեն հազարապետին երթալ և բարեխօսել որ խնայեն ժողովրդին և չռմբակոծեն գիւղը։ Հազարապետը մէկ ժամ պայմանաժամ կուտայ, որ ժողովուրդը քաշուի գիւղէն։ Գասըմ պէկ կը պատասխանէ զօրապետի հրաւէրին դիւցազնական մերժումով մը թէ բնաւ անձնատուր չըլլար եթէ նոյն իսկ Խվները մոխրակոյտներուն տակ թաղուի։ Հազարապետը իսկոյն ևեթ հրաման կընէ ռմբակոծել գիւղը։ Պէկը խորհրդակցութեամբ Ովասիսի կ.-ին իր մարդիկը դիրքերու մէջ կը բաժնէ և կը պատրաստուի կռուի։ Սոյն կռուի մէջ կային նաև երկու հայ պատերազմիկ երիտասարդներ։ Գասըմ պէյ և Իսքանեան Խօջա քսանամեայ իր քիւրդ ծառան, ուրիշ ծառաներու հետ գեղին հարաւը, Ովասիսեան կորիւնները Վահրամ, Նարպէյ և Մըստէն արևմտեան կողմը, իսկ Մօսէն, Հըսէն և Հըսընօն արևելեան դիրքը բռնած և ամրացած էին։

Ժամը 3-ին սկսաւ ահռելի կռիւը և թնդանօթաձգութիւնը։ Զօրքերու թիւն էր 400 հետևակ, 100 հեծելազօրք և 60 ոստիկան։ 28 թնդանօթ արձակեցին գեղին վրայ։ Այդ պահուն Վահրամ և Նարպէյ Հըսէն և Խըլօն՝ Գասըմ պէկի հետ դրոհ տալով զօրաց վրայ ճեղքեցին զանոնք և յաղթական ու ապահով բարձրացան լեռ։ Սպաննուած են 6 զինուոր։ Գասըմ պէկ և իրենները հետևանքը նկատի ունենալով խնայած էին զօրքերուն։

Գասըմ պէյի հեռանալէն յետոյ զօրքերը լեցուեցան գիւղ. սպաննեցին նախ 2 շէյխ, որոնք կրօնական դրօշակով զօրքերը դիմաւորելու գացած էին, 1 մօլլա, 9 քիւրդ և 6 հայ երիտասարդ, 1 հայ կին և 1 շէյխի աղջիկ՝ ընդամէնը 20 հոգի սպաննուած։ Իսկ աւերն ու կողոպուտը անսահման է, մինչև անգամ կիներու վարտիքները հանելով տարեր են։ Գասըմ պէյէն թալաններեն 11 ձի, իսկ քէօշկը թնդանօթներէն աւերուած է, այրեր են գիւղի բոլոր խոտերը 51 դէզ, (իւրաքանչիւր դէզ 25—30 բարդէ կը բաղկանայ և 1 բարդը 30 խուրձէ և մի խուրձ 9—10 լիտր է)։ Այժմ գիւղը բոլորովին մերկ և աւերակ է։ Գասըմ պէյի եղբայրը՝ Նոյ պէյը, որ կռուէն առաջ զօրաց քով գացած էր բանակցութեան համար և վար դրած էին, այժմ Մուշ բանտարկուած է։ Խվների հոկտ. 29-ի արիւնահեղ կռիւը, նշանակութիւն ունեցող դրուագ մըն է Թիւրք և քիւրդ յարաբերութիւններու մէջ. քիւրդերը թէև սպաննութեան կոյր գործիք, սակայն սկսած են քիչ հասկնալ կարծես և պռստել յօնքերնին թէ հայերէն յետոյ կարգը իրենց կուգայ։

---

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ՏԻԱՐՊԷՔԻՐ, 3 Նոյեմբեր

Անցեալ շաբաթ յանկարծ սարսափ տիրեց քաղաքին մէջ. հայերը 95-ի կոտորածներու կրկնումը կարծելով սկսան տուներնին փախչիլ, իսկ Թիւրք խուժանէն մաս մը, անտեղեակ գործին էութեան, կը պատրաստուէին թալանի և թերևս կոտորածի ալ։ Այդ սարսափի իրարանցումին մէջ ռուսական հիւպատոսը, որ Կարինէն հոս եկած էր մէկ օր առաջ, և շուկան պտոյտի ելած, զարմացած կը հարցնէր թէ ինչո՞ւ հայերը կը փախչին. երբ ըսին թէ կոտորածէ՝ կը վախնան, գըլուխը օրօրեց և վերադարձաւ իր բնակարանը։ Հետեւեալ օրը, կիրակի առաւօտ հիւպատոսը հայոց եկեղեցին եկածէր և նոյն օրը կէսօրին մեկնեցաւ Մուշ։

Այս տակնուվրայութեան պատճառը կը վերագրեն համիտիէ հրամանատար Իպրահիմ փաշայի յարձակումներուն, ուրկէ, Թիւրքերը, իրենց ըսելով, մեծ վնասներ կրած են և կը կրեն։ Երեք ամիսէ ի վեր Տիգրանակերտի, Ուռֆայի և այլն, շրջանները պաշարած դրութեան մէջ ըլլալով ամէն երթևեկութիւն և գործունէութիւն դադրած էր։ Ասոր հետ մէկտեղ Իպրահիմի մարդիկը սկսան յարձակել նաև ոստիկաններու և զինուորներու վրայ. սպաննուած են 37 զինուոր և 13 ոստիկան, իսկ ժողովրդի վնասը անհաշիւ է, ոմանք մինչև միլիոն կը հաշուեն։

Դրգռուած այս դէպքերէն, Թիւրք ժողովուրդը խուժեց կառավարական շէնքին և կուսակալի բնակարանին վրայ և ամբողջ երեք ժամ պաշարեց վալիին տունը, բարձրաձայն բողոքելով Իպրահիմ փաշայի դէմ։ Վալին Թոյլ և հիւանդկախ մարդ, այդ անակնկալ յարձակումէն լեղապատառ, կնիքը յանձնեց ամբոխին ըսելով՝ „ինչ կուզէք ըրէք, զիս հանգիստ ձգեցէք, ես հիւանդ եմ“։

Ժողովուրդը յետոյ կոխեց հեռագրատանը, հեռագրապետ Զաղա էֆէնտին, նախ ընդդիմացաւ, բայց երբ գլխուն քանի մը փայտի հարուած կերաւ, ամէն բան յանձնեց ամբոխին, որ մանրամասն հեռագրեց պալատ իրերու վիճակի մասին։

Հետևեալ առաւօտ նոյն ամբոխը դիմեց հայոց եկեղեցին և ստիպեց առաջնորդը, որ իրեն ընկերանայ հեռագրատուն, անոր ստորագրութիւնն ալ առնելով հեռագրեցին սուլթանին,

Այս դէպքերէն հինգ օր վերջը Եըլդըզէն ի պատասխան հետևեալ հեռագիրը եկաւ՝ „Իպրահիմ փաշան հալէպ կանչուած է դատի համար“։ Ժողովուրդը սակայն, ատով չը գոհացաւ և նորէն երկար հեռագիր մը տուաւ։ Այս միջոցին Իպրահիմ փաշան իր յարձակումները կը շարունակէր։ Ամբողջ 12 օր ժողովուրդը հեռագրատունէն չը հեռացաւ՝ այլ միայն այն ժամանակ երբ Պօլսէն ստացաւ սա պատասխանը՝ „Աշիրաթապետ Իպրահիմ փաշան Հալէպ կանչուած է դատի ենթարկուելու համար, եթէ չերթայ բռնի ուժով պիտի հնազանդեցնեն կայսերական հրամանին, և 15 տարիէ ի վեր ինչ վնաս որ եղած է ձեզի, Տիգրանակերտի վիլայէթին մէջ, ամբողջը պիտի վճարէ. և թէ վալին պաշտօնանկ ըլլալով, տեղը կարգուած է Մուսուլի կուսակալ Հասան փաշան“։ Հեռագրին վերջը

կայսերական հրամանն էր, որ ամբոխը ցրուի։ Արդարև, ամբոխը հնազանդեցաւ և ցրուելէ առաջ երեք անգամ „փատիշահըմ չօք եաշա“ աղաղակեց։

Այմ հարց է Իպրահիմ փաշայի Հալէպ գնալը, կսպասի արիւնահեղ պատերազմի։ Իպրահիմ փաշայի ուժը կըսեն կը հասնի 50,000ի։ Հայերը միշտ երկիւղ ունին թէ մի գուցէ 95ի դէպքերը նորոգուին և անակընկալ կերպով զոհ գնան կառավարական դաւադրանքներու, ուստի ինքնապաշտպանութեան մասին մտածելը շատ բնական պիտի ըլլար այս պարագային։

—

11 դեկտեմբեր 1907

Քաղաքիս շարժումը վերջացաւ լաւագոյն օրերու յուսով։ Կառավարութիւնը ծայրաստիճան կաշխատի ազգութիւններու միջև գոյացած համերաշխութիւնը քանդել և վիժեցնել տալ։ Ահա այդ նպատակով է, հայատեաց Ֆէրիք Թէվֆիգ փաշան հոս ղրկուեցաւ դեկտ. 8-ին, ինչպէս նաև Սաատէթթին պէկ անունով մէկը, որ Պոլիս զինուորական գայմագամութենէ միրալայութեան աստիճան բարձրացած է, որ այստեղ գայ և ոստիկանական հրամանատարութիւնը ստանձնէ։

Թէվֆիգ փաշան 1895-ին միւլազիմ էր Մալազկերտ, 1895-ին Սասուն ղրկուեցաւ իբր հաղարապետ և նոյն տարւոյ վերջը միրալայութեան բարձրացաւ, Սասուն ղրկուեցաւ իբր հազարապետ և նոյն տարւոյ վերջը միրալայութեան բարձրացաւ՝ Սասունի մէջ իր գործունէութեան ի վարձատրութիւն։ 1898-ին ռուս-թրքական սահմանագլուխը ղրկուեցաւ իբր Միրիլիվա։ 1903ի վերջերը իբր Ֆէրիգ Տիգրանակերտ եկաւ։ 1904-ին անգլիական հիւպատոսի աշխատանքով, ղրկուեցաւ Եէմէն, Տիգրանակերտի վիլայէթի քրիստոնեաները այդ հրէշին ձեռքէն ազատելու համար։ Հիմա նորէն կը վերադառնայ մեր քաղաքը։ Իբր պատուհաս քրիստոնեայ բնակչութեան։

Վալին Ֆէհմի պէյը, պաշտօնանկ ըլլալով իր անկարողութեանը համար, ամսոյս 6-ին մեկնեցաւ Պոլիս սակայն լուր եկաւ թէ Ուռֆայի մէջ մեռեր է, այսպիսով մարդը կազատի յաւիտենական դատապարտութենէ մը։

Թէև նոր վալի նշանակուած էր՝ Մուսուլի կուսակալ Մուսթաֆա պէկ համբաւաւոր „հայակեր“—Իզզէթ փաշայի եղբայրը, բայց հրաժարեցաւ, թերևս իր անկարողութեանը համար, ուստի բնիկ մառաշցի և Երզինկեանի միւթէսարրֆ Մահմուտ Արիֆի փաշան նշանակուած է, իբր վալիի փոխանորդ և վաղը կը հասնի իր պաշտօնատեղին։

Հաւանօրէն հիւպատոսներու դրդմամբ, ամսոյս 4—6 ին հապշտապ հոս հասան երկու թապուր զօրք (Սվազի 73-րդ ալայի, 2-րդ թապուրը և Մալաթիոյ 74դ ալայի 2դ թապուրը)։ Ասոնք այն զօրքերն են, որ գացած էին Տէրսիմը ուղղութեան բերելու և այժմ եկած են Տիգրանակերտը ուղղութեան բերելու։

Պոլսէն քննիչ յանձնախումբը, որ դեկտ. 5-ին Հալէպէն ճամբայ ելած է, կը բաղկանայ հետևեալներէ՝ Ֆէրիգ Թալաթ փաշայ, գայմագամ Նէճիպ պէյ, էրքեանի Հարպ պին պաշի Ֆէհմի պէյ, որոնց կը միանան երեք Հարուստ, իբր պատուոյ անդամներ, Համուսէն և Համայէն և երկու հոգի ալ Հալէպէն, ընդամէնը 8 հոգի։

Ամէն ջանք կը ելլայ, որ այնքան դժուարութիւնով գոյացած համերաշխութիւնը չքայքայի. կառավարութեան սարքած դաւադրանքներէն։ Միւս կողմէ կառավարութեան բոլոր ջանքերը կը ձգտին, որ ազգերու մէջ այդ համերաշխութիւնը չիրականանայ։

---

## ԳԱՂԹ ԵՒ ՍՈՎ

—

Պիթլիս, 28 Նոյեմբեր 1907

Անցեալ գարունէն դէպի կովկաս գաղթելու ընդհանուր տրամադրութիւնը ու ձեռնարկները զրկեցին հայ երկրագործը ժամանակին վարուցան ընելու հոգէն. որով Պուլանըխի, Մանազկերտի, Ախլաթի և այլ գաւառներու բերրի հողերու մէկ մասը մնաց խոպան և անմշակ, այդ ալ տեղիս ռուս հիւպատոսի և մանաւանդ պղտոր ջուրու մէջ ձուկ որսացող Թարգմանի շնորհիւ։ Վերոյիշեալ գաւառները, որոնք միշտ առատութեան շտեմարան են եղել ամբողջ Պիթլիսի և Վանի համար, այսօր իրենց բաւելու չափ ցորեն կամ կորեկ չունին։ Նոր տուրքերը վճարելու և իրենց ընտանիքը ապրեցնելու համար, սէլէֆով և ծանր տոկոսներով կնքուած պարտքերը պէտք էր վճարել հունձքի ժամանակ։ Սակայն սէլէֆճին իր պահանջները գանձեց, քիւրդ բանուորները իրենց բաժինը վերցուցին, „կալմաս“ ժողուող քիւրդը տիրացաւ իր առնելիքին, սեփականատիրոջ մնաց չնչին քանակ մը միայն։

Ծանր պարտքերու տակ թաղուած գիւղացին արդէն կորսնցուցեր է իր սեփական եղն ու արօրը։ Ամէն ինչ, սերմնացու հայլն փոխ կառնէ Հարևան Թիւրքէն կամ գեղի քիւրդ աղայէն, արդիւնքը կիսելու պայմանով, գոնէ այդ կէսը իրեն մնար։ Յեղյեղուած սովորութիւն է ըսել որ գիւղացիները կալատեղիէն ձեռնունայն ետ կը դառնան, երբեմն մինչև իսկ առանց ցորենի հատիկ մը տուն բերելու։ Երկրագործ դասը անկումէ անկում կը գլորի և մարդկային թշուառութիւնը կը ներկայանայ աննկարագրելի և զարհուրելի պատկերի մը տակ, ուր կը մեռնին ամէն ձգտում, իդէալ և ինքնագիտակցութիւն։

Մուշի դաշտը աւելի ծանր դժբախտութեան մը ենթարկուեցաւ։ Կանխահաս ցուրտ մը խոպան փճացուց և փոշիացուց կորեկի և կըլկըլի արտերը։ Դուրան ու Սասուն, Պուլանըխ, Մալազկերտ, Ախլաթ, Մօտկան, Խիզան և Պիթլիսն ու շրջակայքը, երբեմն 300,000 հայ պարունակող այս նահանգը, 60—80,000 հացակարօտներու բանակ մը ունի, որոնք ցնցոտիներու մէջ մոմիացած մարդկային թոռմած ուրուականներ են միայն։ Սարսափելի ձմեռը կը խոստանայ էն մեծ ողբերգութիւնը։ Հաց ու ցորեն չը կայ ամբողջ վիլայէթին մէջ։ Երեք տարի առաջ տեղական կօդը 5 կուռուշ արժող ցորենը այժմ քսանով չէ կարելի ձեռք բերել։ Երկրին մէջ տիրող անիշխանութեան և անապահովութեան պատճառով, ներածութիւնը գրեթէ դադրած է. կարգ մը շահասէրներու եղեռնային ջանքերը և համեմատական անագորոյն ըէժիմը աւելի կը սաստկացնեն ի-

բաց վիճակը։ Սովի համատարած արհաւիրքը դժոխայինօրէն ցցուած է հայուն առջև, որ ամենատարբերական ապահովութենէ զրկուած, իր օճախին առջև մահը կորոճայ։

Դուրանի և Պուլանըխի հայը անօթութենէ չմեռնելու համար կը փախչի Տիգրանակերտ կամ Ալաշկերտ՝ գթութեան պատառ մը չոր հացին կարօտով։ Անցեալ երկու ձմեռներուն հազարաւոր ընտանիքներ ձգեցին փախան իրենց տուներէն երթալ մուրալու համար՝ Տիգրանակերտի, Պիշէրիի և Խնուսի մէջ։ Անոնց ամայի տները գրաւեցան չէրքէզ գաղթականներէ և կամ քարուքանդ եղան քիւրդերէ կամ թահսիլտարներէ՝ գերանները ծախելու կամ վառելու համար։ Իսկ ներկայիս հեռապատկերը պարզապէս սոսկում կը պատճառէ, մօտ 80,000 մերկ անօթիներ, ի՞նչպէս պէտք է ապրին։ Թողո՞ւնք որ իսպառ ամայացնեն իրենց երբէմնի շէն ու ճոխ գիւղերը. թողո՞ւնք որ մեր հայրենիքը գերեզմանը ըլլայ մեր այսչափ խանդաղատօրէն փայփայած իղձերու... այնքան մաքառումներէ հոյակապ անձնուիրութիւններէ և երազանքներէ յետոյ... Ահա խռովիչ հարցումը։

*

Վերջի պահուն լուր եկաւ թէ Պուլանըխի մէջ դէրիկ հայաշատ և շէն գիւղը հինգ օր առաջ յարձակում կրած է Հասանանցի համբաւաւոր չարագործ Բիզա պէյէն։ Գիւղը ամբողջապէս կողոպտուած է և սպաննուած են վեց մարդ և կին։ Բնակիչները կոփ, գայմագամին դիմեցին բողոքելու։ Կը հաստատուի որ այդ հրեշը ամէն տարի խոշոր կաշառքներ առած է դէրիկէն և սպաննած է գիւղին լաւագոյն երիտասարդները և մեծամեծները և առևանգեր քանի-քանի աղջիկներ և կիներ։

# ԹԻՒՐՔ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

## ՍՊԻՏԱԿ ՏԵՐՐՕՐԸ ԷՐԶՐՈՒՄԻ ՄԷՋ

Սև օրեր են գալիս Աբդիւլ-Համիդի համար։ Բախտը այլևս չի ժպտում նրան, նոյնիսկ եւրոպական հրուշակաւոր „Համերդը“, երբեմն այնքան սիրալիր ու զիջող, այժմ սկսում է ատամներ ցոյց տալ երես առած բռնաւորին։ Գործերը ձախորդ են Մակեդոնիայում, ուր պետութիւնները, անգամ Գերմանիան, վճռականապէս առաջ են մղում բարենորոգման դժբախտ խնդիրը, առանց այլևս ուշադրութեան առնելու Համիդի զայրագին բողոքներն ու առաջարկները։ Բայց աւելի ձախորդ են հանգամանքները Ասիական Թիւրքիայում, որ սուլթանական տիրապետութեան պատանդանն է։

Ամբողջ փոքր Ասիան ասես բռնուել է յեղափոխական խմորման տենդով։ Բաժակը լցուած է, բոլոր ժողովուրդներն են այժմ ըմբոստանում սովի ու բռնութեան ըէժիմի դէմ։ Եւ բոլոր ժողովուրդների դէմ է ուղղուած սուլթանական ներկայ հակադարձ շարժումը, ներկայ ըէակցիան։ Անցա՜ ժամանակը, երբ նա մենամենակ հայ փոքրաթիւ ժողովուրդն էր տեսնում իր դէմ ծառացած և երբ նա, նպաստաւորուած հանգամանքներից, բաշալերուած ուրիշ թագակիր բռնաւորներից, խեղդում էր ընդ երկար հայ ըմբոստումները արեան հեղեղի մէջ... Այսօր արդէն նա ստիպուած է արշաւել նոյն դահիճի դերով իր հաւատակից մուսուլմանների դէմ։ Եւ մասսայի դէմ... Մինչև օրս տաճիկ ու քիւրդ անհատներ էին այդ արշաւանքի առարկան, նրանց ոյժը խորտակւում էր հեշտութեամբ, առանց աղմուկի, մութ, խորհրդաւոր անկիւններում, նրանք գնում էին հանգստանալու կամ հեռավայրերում կամ թէ Բոսֆորի անդունդներում...

Եւ ահա այժմ սկսում է բուն, մասսային ըէակցիան Տաճկաստանում, տաճիկ շարժման դէմ։ Էրզրումի վայրագ ճնշումները արդէն հրաւիրում են համաշխարհային ուշադրութիւն։ Մամուլը խնամքով արձանագրում է իրողութիւնները, „բարեկամ“ օրգանները չափաւորութեան խորհուրդներ են յղում Եըլդըզի դահճապետին։ Էրզրումը առաջին ուժեղ բըռնկումների կենտրոնավայրն է և Էրզրումում էլ սկսել է այսօր կատաղի ըէակցիան։ Ուշագրաւ է փաստի աստիճանական զարգացումը։ Սկզբում, առաջին մասսային ցոյցերից յետոյ, կառավարութիւնը այնպէս ձեւացրեց, իբր թէ առանձին ոչինչ չի պատահել և հրապարակեց, թէ հայերն են դրդիչները։

Երկար ամիսներից յետոյ միայն ըէակցիան ծայր տուեց, բայց մեղմ ձևով, մի քանի գլխաւորների (Մուֆթիի և այլոց) ձերբակալութեամբ։ Հետևեց երկրորդ, աւելի ուժգին և արիւնահեղ ապստամբութիւնը հէնց այդ ձերբակալութիւնների միջոցին—սուլթանի կառավարութիւնը այս անգամ արդէն ահաբեկուած՝ դարձեալ երկար ժամանակ վարանումի մէջ էր և ըստ երևոյթին չէր վստահանում դիմել խիստ, վճռական միջոցների։ Ի՞նչն էր, որ նրան խրախուսեց յետոյ... Արդե՞օք ստոլիպինեան քաղաքականութեան „յաղթանակը“... Արդեօք կողմնակի, հեղինակաւոր ներշնչումնե՞ր... Հնարաւոր է։ Մենք տեսանք, թէ ինչպէս պարսից Շահը ևս, որ ժողովրդական խլրտումների երկիւղի տակ ըստկզբից ի վեր մնում էր հաւատարիմ սահմանադրութեան՝ յանկարծ խիզախեց „պետական հարուած“ տալ և վերահաստատել իր միահեծանութիւնը։ Ենթադրում են, ոչ առանց հիմքի, որ այդ անակնկալ դիմադրութեան մէջ քիչ դեր չեն խաղացել արտաքին ներշնչումները, եկած հիւսիսից... Հիւսիսային բռնապետութեանը, անշուշտ, հաճելի չէ տեսնել ազատութեան յաղթանակը իր սահմանակից երկրներում, կղզիանալ և՛ արևմուտքում և՛ արևելքում ու հարաւում...

Այսպէս թէ այնպէս, թիւրք կառավարութիւնը այժմ է միայն սկսում խմբային հալածանքը թիւրք յեղափոխական շարժման դէմ։ Էրզրումի տաճիկ ազգաբնակութիւնը վերջերս ենթարկուեց չը տեսնուած բռնութիւնների, նոր վալին, զրկած բացարձակ լիազօրութիւններով, մի կատարեալ պատուհաս դարձաւ քաղաքի ու վիլայէթի համար. նա աներկիւղ ճարակում է բոլոր դասակարգերի մէջ և բանտերը լի են մեղաւոր ու անմեղ քաղաքացիներով։ Էրզրումը տնքում է սպիտակ տերրորի արհաւիրքների տակ. սուլթանական փոքրիկ սատրապը, բարձրից հրահանգուած՝ եկել է խեղդելու ըմբոստ շարժումները։ Նոյն մտքով հրահանգներ են արձակուած դէպի բոլոր վիլայէթները,

որովհետև ամեն տեղ արդէն մտել է կամ մտնելու վրայ է վտանգաւոր „համաճարակը“։ Բիթլիսի, Վանի և ողջ բազմաթիւ շրջաններում ևս տարածւում է ամեն օր յեղափոխական գրականութիւնը, տաճիկ ու քիւրդ լեզուներով. հասարակութիւնը կարդում է, լաւագոյն մասը միշտ աւելի և աւելի թեքւում է դէպի նոր գաղափարները, այնինչ՝ յետադէմ ջոջերը սերտ միանում են հարստահարիչ բիւրօկրատիայի հետ... և այսօր արդէն մենք տեսնում ենք տեղ-տեղ կազմակերպուած „իսկական թիւրք մարդկանց“ խմբումներ, հակայեղափոխական դրօշակով, որոնք կատաղօրէն պաշտպանում են „Խալիֆի սրբազան իրաւունքները“, արշաւում են „խառնակիչների“ դէմ և ամեն կերպ ձգտում են արծարծել ցեղական ատելութիւնները, քարոզում են բացարձակապէս նոր արշաւանք հայութեան դէմ, իբրև բոլոր խառնակութիւնների հեղինակի՝ որպէսզի այդպիսով կարողանան հանդցնել համատարած ըմբոստացման կրակը, „խելքի բերել“ իրենց մոլորուած ցեղակիցներին, մուսուլմաններին...

Դիւրին բան չէ... Թիւրք յեղափոխական շարժումը այլևս իր խանձարուրի մէջ չէ, նա բաւականաչափ զարգացել է։ Նա ունի իր նիւթական և միանգամայն գաղափարական փակտօրները։ Ի՞նչը ծնունդ տուեց նրան։ —Նոյն ուժերը, որոնք արծարծել են յեղափոխական հրդեհը բոլոր երկրներում։ Տնտեսական մշանջենաւոր տագնապը, սովը, յարաճուն տուրքերը, հարկահանութեան դժնդակ սիստեմը, պաշտօնեաների յարատև բռնութիւններն ու հարստահարութիւնները, քիւրդ հրոսակների սովորական արշաւանքները, որոնք այժմ արդէն ուղղւում են անխտիր և հայ և տաճիկ աղգաբնակութեան դէմ—դիտեցէք թէկուզ քիւրդ Իբրահիմ բէկի նոր կատարած յարձակումները Դիարբեկիրում, տասնեակ թիւրք գիւղերի աւերումն և կոտորածը.. և նման բազմաթիւ օրինակներ—ահա այն հզօր գործօնները... որոնք ի վերջոյ դուրս հանեցին նաև չափազանց համբերատար մահմէտականներին իրենց կրաւորական վիճակից... Սակայն, նիւթականից զատ՝ կայ, բարեբախտաբար և գաղափարական գործօնը։ Տաճկական լիբերալիզմը հետզհետէ կազմակերպւում է և առաւելապէս դիտակից տարրերը ամենուրեք քարոզում են ժողովուրդին բացարձակ ապստամբութիւն, պրօպագանդը—թերթերով ու բրօշիւրներով—ահագին ոյժ է, անգամ անդրագէտ ու կիսագրագէտ աղգաբնակութիւնների համար։ Այդ պրօպագանդը տոգորուած է ժամանակակից գաղափարներով և ծանրանում է մասնաւորապէս աղգերի համերաշխութեան վրայ։ Նա արդէն զգալի ծառայութիւններ է մատուցել Տաճկաստանի ժողովուրդներին։ Մահմէտականների մէջ կորչում է նախկին ատելութիւնը դէպի „հայ-ռայեան“ և տեղի է տալիս բարեկամութեան։ Հայ ու մուսուլման մարտախմբերը Վասպուրականում յետ են մղում քիւրդ աւազակների յարձակումները, գտնում են յաճախ գողցած ապրանքը, վերադարձնում տէրերին։ Իւրաքանչիւր մի այդպիսի փաստ համարեա թէ մի յեղաշրջումն է մահմէտական մասսաների հոգեբանութեան մէջ և մի խթան հայ-մահմէտական յեղափոխական գործակցութեան... Ո՛չ, հրդեհը այլ ևս մարել չի կարող, որքան էլ Պոլսից Յանձնաժողովներ գան, վայրագ սատրապների առաջնորդութեամբ և բէակցիայի դաժան պատգամներով... Գուցէ նոյնիսկ պէտք է ուրախանալ Էրզրումի վերջին խուճապով։ Թո՛ղ աւելի ևս ատելութիւնն աճի կարմիր Գազանի դէմ իր հարազատ, երբեմն հաւատարիմ երկրպագուների մէջ, թող խպտառմարի վերջին նշոյլը յոյսի, պատրանքի որ մուսուլմաններից միամիտները դեռ կարող են տածել դէպի խալիֆի „վեհանձնութիւնը“, դէպի նրա „հայրական խնամատարութիւնը“... Էրզրումի անցքերը չեն կարող չ՝անդրադառնալ ամբողջ տաճկութեան մտածողութեան վրայ և նրանք կ՝անդրադառնան յեղափոխական շառաչումով։

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

**ԱՐՇԱՒԻՐ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ**

(ՄՈՒՇԵՂ ԵՐԿԱԹ)

Գերեզման մըն ալ, այն անթիւ, անհամար շիրիմներուն երկարութեամբ, որոնց մայլ բայց դատաստանական շղթան սև գօտիի մը պէս կը ձգուի սահմանագլխէն դէպի Վան, Վանէն դէպի Մուշ, ու ամէն կողմ, երկրի բոլոր ծայրերուն վրայ։

Գերեզմա՜ն մը, Արշաւիր Կամսարականն ալ հիմա. և իր ընկերները՝ որ դեռ երէկ իր մեղեդիական ու գաղափարին հաւատքով ներշնչէ ձայնը կը լսէին, որ դեռ քանի մը ամիսներ ու քանի մը շաբաթներ առաջ վկան էին իր տաք ու վճռական հոգիի առաքելական բաբախումին, աւա՜ղ, ստիպւած են այսօր ափ մը հողի, անկենդան ոսկորներու,—գերեզմանի մը վրայ խօսիլ միայն...։

Շատ կանուխ, ազատագրութեան առաջին մարտական շեփորին իսկ՝ անիկա, դեռ պատանի, պատասխանած էր

բուռն խանդավառութեամբ և ինքնայօժար կամաւորութեամբ, զոհելով տանջող ժողովուրդի բարօրութեան դատին համար՝ ամբողջ երիտասարդութիւն մը, խանդավառ տարիներու բոլոր արիւնը, բոլոր ուժը, բոլոր կենսագործութիւնը։ Պօլսէն Փոքր-Ասիոյ լայն շրջանի մը մէջ—ուր որ եղած է Արշաւիր Կամսարական—հերկած է յեղափոխական պինդ հողը անդադար ու սերմանած է՝ իբրև նախ հնչակեան ու ապա վերակազմեալ՝ վաղուան ազատագրութեան արդասաւորութիւնը, լի անսասան հաւատքով, առաջնորդուած դիտակցութեան ու պարտականութեան կարաւանային աստղէն։

Հազիւ տարի մը առաջ արտասահման անցած էր, ակամայ, իրերու դրեթէ բռնաւոր հարկադրութեամբը. և ապա՝ն, ի՜նչ դառնութիւն, ի՜նչ հիասթափում ու ի՜նչ կսկիծ հո՜ն՝ ուր կը յուսար փնտռել այլ ոգեւորանք և այլ յուսադրական անհրաժեշտութիւններ։

Դառնահոգի ու մրրկավար բայց իր կորովին տէր հաւատակիր յեղափոխական գործիչի մը վայել անկեղծութեամբ եկաւ մեզի ինքնաբերաբար, դեռ քանի մը ամիս առաջ, իր ձեռքը դնելու մեր ձեռքին մէջ և բոլորովին նոր եռանդով մը, նոր թափով մը նուիրելու այն հաւատական ու իրաւազուրկ ժողովուրդին՝ որուն ցաւը բաժնած էր, անբաժան անոր կողէն ու անարէն, որուն վերակենդանութեան խորապէս համոզուած էր և որուն համար ուխտած էր ծառայել ամէն գնով։ Ու գնայ անիկա դէպի երկիր։

Եւ ահա այդ գինը, այդ թանկ, այդ անփոխարինելի գինը, իր կեանքի՛ գինը։

Մենք կողբանք կորուստը այս յեղափոխական անշահախնդիր և մաքուր գործիչին ու զինուորին, որ նայուածքը սևեռուն յեղափոխական կարմիր դրօշակին, ազատութեան հաւատքովն ու կարօտովը կը մեռնի, կ՚ողբանք Արշաւիր Կամսարականը՝ որուն յիշատակը՝ ուրիշ շատ մը զոհերու հետ, անմոռանալի պիտի մնայ մեր մէջ, ինչպէս ուրիշ շատերու մէջ և մեզ պիտի ոգեւորէ յարաժամ՝ մեր դժուարին պայքարին ու անվհատ յառաջխաղացութեանը միջոցին։

Բի՛ւր յարգանք դաղափարի զոհերուն և ժողովուրդի պաշտպան նահատակներուն, և բիւր ողջոյն բոլոր այն ընկերներուն՝ որ Արշաւիր Կամսարականներու վրէժխնդրութեամբը անդամ մըն ալ արիացած, պիտի խրոխտան միշտ ու անդադար բռնակալութեան դէմ և պիտի խոյանան դէպի ուշացած, բայց ստոյգ յաղթանակը։

---

## ՅՈՎԱԿԻՄ ԱԶԲԳԿԷՕԶԵԱՆ

Աքիայի դժոխք-բանտերու խորէն, ուր այնքան գեղեցիկ ու կորիճ կեանքեր վարդի պէս կը խամրին, մեզի կը հասնի մեր ընկերոջ Յովակիմ Ազբգկէօզեանի մահագուժ լուրը։

Տասը անվերջ և տանջալից տարիներ Աքիայի դաշ ու բարբարոս զնդաններուն մէջ ապրիլ յոյսի անվկանդ հաւատքով մը, անողոք հիւանդութեան մը դէմ ոգորիլ և բանտի սև արհաւրութեան մէջէն, օր արևը երազել հայ ժողովրդին, որուն ազատութեան խոյանքին նուիրած էր իր երիտասարդ և գինով տարիներու խենթալը և անձնուիրութիւնը, և շղթաներու ժանգին տակ հպարտօրէն հիւծիլ և անշնչանալ,—սրտաշարժ է և դասականօրէն ողբերգական։

Մեր ընկերոջ կենսագրութիւնը կուտանք իր ժամանակին։

---

## ԵՈՒՎԱՆ ԿԱՐՎԱՆՕՎ

Կարվանօվ մէկն է այն դրաւիչ և ժողովրդական պայծառ դէմքերէն, որով մակեդոնական յեղափոխութիւնը կարող էր պարծենալ և որուն անդարմանելի կորուստը կողբան իր ընկերները և ծանօթները։ Եղբայրասպան դաշոյնը չէր կրնար աւելի անարդիւլ կեանքի թելը կտրելով երկու կորիճ ուժերու, որոնք մակեդոնական ազատագրութեան մէջ, իրենց նկարագրի դրոշմը դրած էին։ Այնքան արիւնահեղ կռիւներու մէջ ազատ մնալ թշնամու անողոք դնդակներէն, և բոպէի մը մէջ անէանալ, իրենց փայլուն դաղափարներուն և երազներուն մէջ, այն ալ մօտիկ „ընկերոջ“ ձեռքով, տխուր է և անդիտակցօրէն վայրագ։

Կարվանօվ ծնած է 1860-ին. երիտասարդ հասակէն ուսուցիչ ըլլալու մեծ սէր ցոյց տուած և ինքզինք նուիրած է իր ազգակիցներու վերածնութեան գործին։ Իր ուսումը առած է Պուլկարիա և-կատարելագործած Վիեննա։ Կարվանօվ, իր զարգացած մտքին հետ, քաջ մաթեմաթիկոսի համբաւ ունէր։ 1892-ին Սելանիկ՝ Պուլկարական դիմադիմի մէջ պաշտօնավարեց. հոն մնաց 11 տարի, և այդ միջոցին այդ շրջանի կազմակերպութիւնը լաւագոյն հիմերու վրայ դրաւ։

1903-ին Սելանիկի ուժանակային դաւադրութեան առթիւ ձերբակալուելով կաքսորի Աքիա 101 տարով. սակայն պուլկար կառավարութեան ջանքերով կազատի և կը վերադառնայ Սելանիկ, ապա Սօֆիա, ուր կը շարունակէ իր սիրական պաշտօնը—ուսուցչութիւնը, երբ դաժան մահը կուդայ վերջ տալ անոր թանկագին կեանքին։ Իր պաշտօնավարութեան միջոցին Կարվանօվ կը շարունակէր միանդամայն իր եռանդուն և արդիւնաւոր մասնակցութիւնը Մակեդոնիոյ յեղափոխական գործին, Սարաֆօվի հետ ձեռք-ձեռքի։

Պուլկար բոլոր թերթերը, առհասարակ, կողբան „վայրագ ճակատագրին“ զոհ այդ մաքուր գործիչը։ Եթէ կոյր բաղուկը վերջ չդնէր անոր կեանքին, Կարվանօվ, իբր կազմակերպող և ղեկավարող ընդունակ ուժ, շուտով պիտի հասնէր կազմակերպութեան բաժնուած ուժերը և պիտի ըներ այնպէս ահարկու ինչպէս առաջ. այդ եղած էր անոր իդեալը։ Իր հակառակորդները կը յարդէին դայն անոր մէջ տեսնելով դաղափարի կրովը և զօրաւոր կամքը։ Ան կը ծառայէր ազատագրութեան գործին անշահախնդրօրէն և իր գործին կը նայէր ինչպէս մեկ սրբութիւն։ Իր խօսքերը, որոնք անկեղծութիւն և հաւատք կը բուրէին, դաղտնիքը ունէին դիւթելու յեղափոխութեան զինուորներու սրտերը։ Ահա ատոր համար է որ այդ ամբասիր, միշտ կռուող և հակաճառող գործիչը խորին կսկիծը և հիացումը կը տանի իր ետևէն բոլոր դաղափարի մարդոց։

„Կարվանօվ, կըսէ կենսագրող մը, մեռաւ առանց բիծ մը ձգելու իր կեանքին վրայ և երջանիկ էր որ երբէք չլսեց զեղծարար անունը իր մասին“։ Այդպիսի բարոյական մարմնացումներ թանկագին են ոևէ կազմակերպութեան մը համար։ Կարվանօվ դժբախտ էր սակայն։ Դաղափարի գործիչը աւելի հերոսական և անձնուէր մահ մը կերազէր ազատութեան հորիզոններուն վրայ։

---

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

## ՄԱՐՏՆԶՈՂ ԿԻՆԸ

Մօտ երկու ամիս սրանից առաջ լուր տարածուեց, թէ Ռուսաստանի Սիմբիրսկ նահանգում ձերբակալուել է մի պառաւ կին—հուշակաւոր յեղափոխական և ենթադրում են, որ դա „Տատիկն„ է (Բաբուշկան), իսկական անունով Բրիշկովսկայա։ Լուրը սաստիկ ցաւ ազդեց Ռուսաստանի սոցիալիստներին և յեղափոխականներին, ինչպէս նաև մեր խմբագրութեան, որի հետ „Տատիկը“ արտասահմանում եղած ժամանակ մտերմական յարաբերութեան մէջ էր։ Դեռ յոյս ունէինք, այնուամենայնիւ, թէ այդ ենթադրութիւնը թիւրիմացութիւն է—քանի՞ տարի „Բաբուշկան“ դործել է իր նուիրական ասպարէզում, միշտ որոնած ժանդարմներից և միշտ անելեայթ—սակայն, ահա տարաբախտաբար հաստատւում է չարաշուք լուրը, „Տատիկը“ յիրաւի ձերբակալուած է և նեռւած 65 տարեկան հասակում... Պ ե տ ր օ պ ա վ լ օ վ ս կ—ռուս յեղափոխականների այդ մեայլ դերեզմանոցը...

Սոցիալիստական ըէակցիան, կասկած չը կայ, փառայեղ նաճումներ է անում և յայտնի չէ, թէ մինչև ուր կերթայ այդ նաճողական տենդը...

Բրեշկովսկայան ռուս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան պատկառելի սիւներից մինն է, իսկ ամբողջ Ռուսաստանում իր խելքով ու յեղափոխական տեմպերամենտով, իր անձնուրաց եռանդով, իր ամբողջ բարոյական պատկերով—մի եզակի դէմք։ „Նարոդնայա Վոլիայի“ քաջարի աւանդապահներից է, իր ամբողջ էութեամբ դաղափարին նուիրուած, նրանով ապրող, նրանով հպարտ։ Բառայի կերպով պաշտում է ժողովուրդին և ժողովուրդն էլ շատ վայրերում վաղուց սիրել ու մեծարել է իր անզուգական պրօպագանդիստին։ Ամենքն էլ անւանում են նրան յարդական անունով—„Տատիկն“։ Տասնեակ տարիներ, նա դրեթէ հրաժարւած լոյս աշխարհից, գործում էր ստորերկրեայ մութ խորշերում, դլխաւորապէս գիւղացիների մէջ։ Նրա պրօպագանդի վայրերն էին դլխաւորապէս Վոլգայի աւազանում ընկած գիւղացիաշատ նահանգները, ուր „Բաբուշկան“ ստեղծել է պատկառելի կազմակերպութիւններ, սոցիալիստ-յեղափոխական դաւանանքով։ Նա մոլեռանդ յեղափոխական է և մոլեռանդ սոցիալիստ։ Գիտէ բանեցնել և դրիչ և զէնք։ Երբ բախտի բերմամբ նա ընկել էր ժամանակաւորապէս արտասահման—եռանդով աշխատակցում էր կուսակցութեան կենտրօնական օրդանին և նրա յօդուածները, նրա պերճախօս յորդորները իր „որդիներին ու թոռներին“ կարդացւում էին միշտ կենդանի հետաքրքրութեամբ։

Հէնց որ հնչեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը—„Բաբուշկան“ յանկարծ անհետացաւ... Նա նորից դտնւում էր պարտքի դաշտում, նորից Սամարայի ու Սիմբիրսկի թշւառ, կեղեքւած, միլիօնաւոր գիւղացիութեան մէջ, նորից հնչեցնում էր սոցիալիզմի ու ազատամբութեան քարոզը։

Եւ ահա բռնութեան արիւնոտ թաթը իջաւ նրա բազմատանջ ուսերին։ Վաղուց փնտռում էր նրան իշխանութիւնը. „Բաբուշկայի“ հեղինակութիւնը, նրա բարոյական հմայքը այնքան մեծ էր ժողովրդի մէջ, որ ամեն կերպ հովանաւորում էին նրան, ծածկում արիւնարբու դահիճներից։ Վերջապէս, թանկագին որսը նրանց ձեռքն ընկաւ... Եւ այժմ ազատութեան պառաւ մարտիկը փակւած է Պետրոպավլովսկի մութ ու խոնաւ մի նկուղում... Նրան էլ գուցէ պիտի տանջեն... դաղտնիքներ կորդելու համար։ Ամեն բան ապասելի է Պետերբուրդի վամպիրներից. ճերմակ մազերն անգամ թերևս արդելք չը լինեն մի դժոխային ինկվիզիցիայի...

Բաբուշկան դնա՞ց, թերևս ընդմիշտ... Նա կազատւի միայն այն ժամանակ, երբ Յեղափոխութեան յաղթական դրոհը կը փշրէ քաղաքական բանտերի դռները։ Ե՞րբ արդեօք կը դայ այդ օրը...։

---

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սոցիալիստական հոսանքը Անդլիոյ մէջ.—Անդլիոյ Հալլ քաղաքին մէջ յունւար 20-ին դումարւած Անդլիոյ „Աշխատաւորական Կուսակցութեան“ կոնդրեսի երկրորդ նիստին 514,000 ձայնով, 469,000-ի դէմ՝ ընդունեցաւ հետևեալ որոշումները, իբր վերջնական նպատակ որու պիտի ձգտի այդ ուժեղ կուսակցութիւնը, որ անպասելիօրէն, ընկերվարական հոսանքին մէջ կը մտնէ։

1) Արդիւնաբերութեան, բաշխումի և փոխանակութեան միջոցներու համայնացում՝ ժողովրդական պետութեան հսկողութեան տակ, ընդհանուր հասարակութեան շահերուն համար։

2) Բոլորովին ազատագրել աշխատութիւնը կապիտալիզմի և մեծ հողատիրութեան տիրապետութենէն։

3) Երկու սեռերու ընկերային և տնտեսական հաւասարութիւն։

Սոցիալիզմի համար մեծ յաղթանակ մը կը համարւի այդ օրը և կարևոր դէպք մը Անդլիոյ քաղաքա-տնտեսական պատմութեան մէջ։

Պալֆուր՝ Հալլի կոնդրեսի մասին հետևեալը ըսաւ իր ճառին մէջ, „Աշխատաւորական կուսակցութիւնը կարմիր դրօշ բարձրացուց։ Այժմ Անդլիոյ մէջ քաղաքական կուսակցութիւնները կը դիմեն նոր կերպարանափոխումի ուրկէ յետոյ դէմառդէմ պիտի դտնւին մէկ կողմէն՝ Միութենական կուսակցութիւնը, իբր դլխաւոր տարր, միւս կողմէ՝ մեր բարեկամ սոցիալիստները՝ որոնք անտարակոյս մարտական ուժը պիտի կազմեն։ Ընկերական շինութեան այս երկու իդէալներու մէջ է, որ ապագայի մեծ պայքարը պիտի սկսի“։

---

Գերմանիա և Լեհաստանը. — Բրուսական Լանդթակը (խորհրդարան) յունւար 17-ին վերջնապէս ընդունեց լեհերը սեփականազրկելու օրէնքը։ Այս առթիւ լեհ երեսփոխանները հանդիսաւորապէս բողոքեցին „անարդար օրէնքին դէմ որ կը գործադրւի պետութեան մէջ անպաշտպան փոքրամասնութեան մը դէմ“, „Մենք, յարեց լեհ երեսփոխան մը, անվկանդ քաջութիւնով մը պիտի ըսկսինք կռիւը մեր հայրենի հողին համար ուր կը հանդչին մեր հայրերու նշխարները և ուր կը դտնւին մեր պատմական անցեալի յիշատակները։ Մեր դատը արդար է և ազնիւ։ Մենք պիտի յաղթենք ամէն ձախորդութեան. ինչ որ ենք իբր ժողովուրդ, կուզենք մնալ և պիտի մնանք“։ Ռուսական Լեհաստանի թերթերը „ատամն ընդ ատամանի“ սկզբունքը կը քարոզեն դերմաններուն դէմ. „ոչ մէկ թիզ հող կրսեն, դերման դաղութներուն որոնք կուդան անբարոյականութիւն տարածելու լեհերուն մէջ“։

---

Ծողովրդական ցոյց.—Յունւար 12-ին Պերլինի մէջ ժողովրդական մեծ ցոյցեր եղան, ի նպաստ ընդհանուր քուէարկութեան, և միանդամայն իբր բողոք՝ Պիլլովի կոպիտ քաղաքականութեան դէմ, որ կը հակառակէր ժողովրդի ջերմ փափագին։ Այս ցոյցը բուռն արձագանք դտաւ երկրին դլխաւոր մասերուն մէջ։ Սոցիալիստները պարագլուխներն եղան ժողովրդական և ազատական սոյն շարժումին, որոնց դէմ, Կիյոմի կառավարութիւնը, ակռայ սկսած է կճրտնել։ Յունւար 21-ին անդործ բանւորներու ուրիշ ցոյց մ՝եղաւ Պերլինի մէջ։ Կառավարութեան միջամտութիւնը առաջ բերաւ արիւնահեղութիւն։ Յունւար 25-ին սոցիալիստներու պատահական մեկ ցոյցը, ոստիկանութիւնը բռնի ուժով ուզեց ցրել։ Յուցարարները ոստիկաններու երեսին կը պոռային „արիւնկալ շուներ“։ Յունւար ամիսը Գերմանիոյ համար նոր և աւելի ազատական շրջանի մը դուռները կը բանայ։

---

Իզմիրի դէպքը—Յունւար 24-ին Իզմիրի մէջ ձերբակալեցաւ Օսման Խուլուսի մեկը՝ երբ ֆրանսական փօստէն

դուրս կելլեր։ Վրան գտնուեցան Երիտասարդ Թիւրքերէն եկած նամակներ, որու հետևանքով ձերբակալուեցան Մէհմէդ Նէճիպ, վիլայէթին քաղաքական դիւանին քարտուղարը, Ճէմիլ Միդհատ՝ յոյն լրագրներու դրաքննիչը և ուրիշներ։ Մէհմէդ Նէճիպ կամբասանի որ դրամով կուսակցիներ վարձած և Երիտասարդ Թիւրքերու հրատարակութիւններ տարածած է։

—

Պարսկաստան.—Մէճլիսը, եթէ բախտի բերմամբ, կրցաւ Շահի պետական հարուածը դերև հանել։ սակայն իր գործունէութիւնը կը բաղխի ներքին շատ մը բարոյական և նիւթական արգելքներու։ Դժբախտաբար իր զեղեցիկ որոշումները „օդային“ կը մնան և երկրին մէջ կը շարունակի անիշխանական դրութիւնը, որուն ուժ կուտան խաւար և մակաբոյծ տարրերը։ Ազատականներու և յեղափոխականներու ընդհարումները կը շարունակին երկրին զանազան կէտերու վրայ, մասնաւորապէս Թաւրիզի մէջ ուր շատ մարդիկ սպաննուած և շուկաները փակուած են։

Մինչ այս մինչ այն, Թրքական զօրքերը կը յառաջանան և պարսիկները ոչ մէկ դիմադրութիւն չեն կրնար ցոյց տալ Թիւրքերու արշաւանքին։ Ֆարման Ֆիրմա պարսիկ հրամանատարը որ դժբախտ արկածներէ յետոյ ապաստանած էր Սուճպուլագ, ետ կը նահանջէ Թիւրք հրամանատարի Թրնդանօվի սպառնալիքներուն տակ։

Պօլսոյ պարսկական դեսպանը հեռագրած է սահմանադրական պարսիկ կոմիտէին Թէ, Թիւրք կառավարութիւնը հրամայած է նոր հողեր գրաւել Պարսկաստանէն, և Թէ կոմիսիոնի քննութիւնը պարզ աչքակապութիւն մըն է։

# ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

1905-ին սուլթանի դէմ եղած ապստամբեան փորձէն յետոյ ձերբակալուելով, մեր ընկեր Էդուարդ Ժօրիսը, ծպտուած պէլճիգոյի, ինչպէս յայտնի է, դատապարտուած էր մահուան։ Երեք տարիէ ի վեր Պօլսոյ բանտին մէջ տառապելէ յետոյ, այժմ ազատուած է և վերադարձած Անվէրս՝ իր հայրենիքը։

Իր ազատութեան առթիւ „Դրօշակի“ խմբագրութեան շնորհաւորութեան ի պատասխան, Ժօրիս պատասխանած է, ի միջի այլոց, հետևեալ սրտոտ տողերով, „Լրբի տարբայ տանջանքը ոչ միայն բարոյապէս թուլցուցած չէ զիս, ընդհակառակը աւելի զօրացնդած, և աւելի քանի երբէք արդարութեան անյողդողդ ծարաւ ունիմ։ Ես միշտ կը մնամ ազատութեան, հարստահարուածներու ու թոյլերու կողմը, աշխարհի մեծամեծներուն, անարդարութեան և բռնակալութեան դէմ“...։

—

Թիւրքիայում գործող դիմադիր կուսակցութիւնների կօնդրէն ուղարկեց Թէհրան՝ պարսից Մէճլիսին մի հեռագիր, յայտնելով նրան իր ջերմ համակրանքը, ժողովրդական իրաւունքների համար սկսած պայքարի համար։

—

Ուրախալի մի փաստ տեղի ունեցաւ Նորերս Ատրպատականում,—քիւրդ խմբերից մէկը, դիմեց Դաշնակցութեան տեղական մարմնին, հրաւիրելով նրան միջնորդ և հաշտարար լինել իրենց մէջ ծագած ներքին կռիւների համար։ Մեր մարմինը սիրով և աջողութեամբ կատարեց այդ դերը։

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

## ԱԶԴ

Կը պատահի որ Կովկասէն կամ ուրիշ վայրերէ Պալքանեան Շրջանը գան երբեմն „դաշնակցական“ կամ „զինուոր“ ընկերներ, առանց որոշ գործ մը ունենալու, առանց այդ ուղղութեամբ կատարուած որոշ յանձնարարութեան մը, այլ լոկ ինքնակամ, զուտ անձնական և յաճախ թափառական հանգամանքներու տակ։ իրենց ձեռքն ունենալով պարզ յանձնարարական մը՝ որ ներկայացնողին ինքնութիւնը միայն որոշելու բնոյթն ունի։

Որպէսզի միանգամ ընդ միշտ վերջ դրուի անպատահութեանց և թիւրիմացութեանց կը յայտարարենք.

Համաձայն վերջին Ընդհանուր ժողովի կտրուկ որոշումներուն ու կազմակերպական արգելիչ Օրէնքներու, ըլլայ Հ. Յ. Պալք. Հետր. կոմիտէս, ըլլան մեր Շրջանի Դաշ. Մարմինները՝ ոչ մէկ կազմակերպական-ընկերական նիւթական օժանդակութիւն պիտի ընեն այդ կարգի ընկերներու։

Ուստի կը յայտարարենք այս պարագան լուրջ ուշադրութեան առնէն այն ընկերներու՝ որոնք այս կողմեր գալու տրամադրութիւններ կը սնուցանեն իրենց մէջ; ինչպէս նաև կը խնդրենք ընկերներէն արձագանքի ըլլալ մեր այս ազդարարութեան և ծանօթացնել անոր միտքը՝ մեր շրջանը մեկող ընկերներու։

Հ. Յ. Դ.
ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

---

Մեր ընթերցողներէն եւ ընկերներէն կը խնդրուի վերանորոգել անյապաղ իրենց հասցէները, պարզ և որոշ գրած, եթէ կը ցանկան կանոնաւոր ստանալ «Դրօշակի» համարները։

---

## ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Սպառուածներ հանուած են ցանկից)

| | | Գր. |
|---|---|---|
| 5. | Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիր. (Ռ. տպագր.) | — |
| 8. | Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը | — |
| 18. | Կազմակերպական կանոններ. (Բ. տպագր.) | — |
| 21. | Նախագիծ Տովկասեան գործունէութեան. (Բ. տպ.) | — |
| 25. | Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը. | — |
| 42. | Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան | — |
| 43. | Զորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները. | — |
| 44. | Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1907) | — |
| 45. | **Programme-minimum,** Հ. Յ. Դ. | — |
| 46. | **Rapport**—Ներկայացրած Միջազգային սոցիալիստական գոնգրէսին (Շտուտգարտ). | — |
| 48. | **Déclaration du Congrès des Partis d'opposition de l'Empire Ottoman.** | — |

| | | |
|---|---|---|
| 15. | Հայաստան եւ Մակեդոնիա. | .50 |
| 22. | Подвиги царизма. В. Араратскій. | .50 |
| 23. | **Les tueries de Bakou,** A. ARAZI | .20 |
| 24. | Յեղափոխական դաշն. | .20 |
| 26. | Կոչ Մահմէտականներին (թուրքերէն) | .10 |
| 27. | **Les Plaies du Caucase,** E. AKNOUNI | 2.— |
| 28. | Ազատութեան նահապետին. ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ. | .40 |
| 29. | Մեծ մարդասպանի դէմ (Դատավարութիւն) | .50 |
| 30. | Վիտօշի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ. | .50 |
| 31. | Յեղափոխականի մտքերը. ԲՐ. ՄԻԲԱՅԵԼԵԱՆ | 1.— |
| 32. | Հայորդիներ. ՍԻԱՄԱՆԹՕ. | .50 |
| 33. | Սասուն-Մուշի կռիւները | .50 |
| 34. | Հայկական տանջանքներ եւ Եւրոպան. ԲԵՐՈՆՇՏԱՅՆ | .50 |
| 35. | Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ. | 1.— |
| 36. | Միացէ՛ք, կոչ թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն) | .10 |
| 37. | Թիւրքական բանտերը. ՄԱՐ. | .25 |
| 38. | Գաղտնական կուսակց. Ռուսաս., ԱՐԱՐԱՏՍԿԻ | .50 |
| 39. | Հայաստանը եւ Եւրոպան. Գ. ԲՐԱՆԴԷՍ. | .20 |
| 40. | Աղքիւր-Սերոբ (Կենսագրական). Ս. Մ. | .25 |
| 41. | Եւրոպացիներու կարծիքը | .30 |
| 47. | Դէորգ Զավուշ | .20 |
| 49. | **Le Criminel sur le Trône** E. AKNOUNI. | .10 |

---

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ Սէրիան (13 հատը) 5 ֆր.։

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ՝ Սէրիան (20 հատը) 1 ֆր.